



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱԲՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Ա.Ղազարյան

Վարչական գործ թիվ ՎԴ-5/0546/05/09



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

« 14 » փետրվարի 2014թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը
հետևյալ կազմով՝ (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

նախագահող դատավոր՝ Արթուր Առաքելյան
դատավոր՝ Աշոտ Աբովյան
դատավոր՝ Գալուստ Դարիբյան

*մասնակցությամբ՝ հայցվոր Արևհատ Պողոսյանի
հայցվորների ներկայացուցիչ Սուսաննա Մխիթարյանի
պատասխանողի ներկայացուցիչ Կարեն Խաչատրյանի
երրորդ անձանց ներկայացուցիչներ Գեղամ Բաղդասարյանի,
Գագիկ Հարությունյանի, Իշխան Վանդյանի*

քննելով Ա.Գալոսյանի, Ֆ.Սարգսյանի իրավահաջորդի լիազորված անձ՝ Ա.Պողոսյանի, Վ.Պողոսյանի իրավահաջորդ՝ Ա.Պողոսյանի, Գ.Պողոսյանի, Հ.Գալոսյանի բերած վերաքննիչ բողոքն՝ ըստ հայցի Ֆելիքս Սարգսյանի իրավահաջորդ Լաուրա Սարգսյանի, Գոռ Պողոսյանի, Վաղինակ Պողոսյանի իրավահաջորդ Արևհատ Պողոսյանի, Հովսեփ և Անդրանիկ Գալոսյանների ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու տարածքային ստորաբաժանման /երրորդ անձինք՝ ՀՀ Շիրակի մարզպետարան, «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվ/ պետական գրանցման միասնական 1-2 մատյանի թիվ 000002 համարի տակ 15.04.2002 թվականին Մարզպետարանի սեփականության իրավունքի գրանցումը մասնակի՝ ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կապի նախարարությանը թողնված 350 քմ մակերեսով բնակելի շինության մասով, անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք Մարզպետարանի և Համալսարանի միջև 23.04.2002 թվականին կնքված նվիրաբերության պայմանագիրը մասնակի՝ ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կապի նախարարությանը թողնված 350 քմ մակերեսով բնակելի շենքի մասով, անվավեր ճանաչելու և Գյումրու Տիգրան Մեծի պողոտա թիվ 1 հասցեով «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի՝ 02.05.2002 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի՝ ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կապի նախարարությանը թողնված 350 քմ

մակերեսով բնակելի շինության մասով, անվավեր ճանաչելու պահանջների մասին, քիվ ՎԴ-5/0546/05/09 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 27.03.2013թ. վճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (դատավոր՝ Էդ.Նահապետյան) 2009 թվականի մայիսի 8-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2009 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ վարչական գործը նշանակվել է դատաքննության:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2010 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ վարչական գործի քննությունը վերսկսվել է:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի վճռով հայցը մերժվել է:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքի մասը վերադարձվել է:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակի և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարանի նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (դատավոր՝ Ա.Ղազարյան) 2011 թվականի հունվարի 17-ի որոշմամբ գործի նոր քննության վարույթ է հարուցվել և նշանակվել է նախնական դատական նիստ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ դատական նիստերին կողմի պարտադիր մասնակցությունն ապահովվել է:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2012 թվականի մարտի 14-ի որոշմամբ վարչական գործի քննությունը վերսկսվել է:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2012 թվականի հունվարի 27-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ Սուրիկ Ա.Գալոյանը, Ֆ.Սարգսյանի իրավահաջորդի լիազորված անձ՝ Ա.Պողոսյանը, Վ.Պողոսյանի իրավահաջորդ՝ Ա.Պողոսյանը, Գ.Պողոսյանը, Հ.Գալոյանը 2013 թվականի ապրիլի 26-ի փոստային առաքմամբ բերել են վերաքննիչ բողոք:

Թիվ ՎԴ-5/0546/05/09 վարչական գործը վերաքննիչ դատարան է ստացվել 17.05.2013թ. և նույն օրը հանձնվել է դատական կազմին:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մայիսի 21-ի որոշմամբ պետական տուրքի վճարումից ազատվել է և վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 1-ի որոշմամբ «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբերատիվի ներկայացուցիչ Ի.Վանոյանի վերաքննիչ բողոքի պատասխանը վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է:

Վերաքննիչ դատարանին է ներկայացվել «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբերատիվի ներկայացուցիչ Ի.Վանոյանի վերաքննիչ բողոքի պատասխանը:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցը վարչական դատարանը մերժել է 18.05.2010 թվականի վճռով:



Հայցվորների վճռաբեկ բողոքի հիման վրա, ՀՀ վճռաբեկ դատարանը 27.12.2010թ. թիվ ՎԳ-5/0546/05/09 որոշմամբ բեկանել է ՀՀ վարչական դատարանի 18.05.2010թ. վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: ՀՀ վարչական դատարանը 17.01.2011թ. որոշմամբ գործը վարույթ է ընդունել /դատավոր Ա. Ղազարյան/:

ՀՀ վարչական դատարանը 19.09.2011թ. որոշմամբ գործը նշանակել էր դատաքննության:

Գործի դատաքննությունն ավարտվել էր 28.02.2012թ. և դատական ակտի հրապարակման օր էր հայտարարվել 2012թ. մարտի 14-ը:

ՀՀ վարչական դատարանի 14.03.2012թ. որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է ինչ որ անհիմն փաստաթղթի պահանջով և դրանից հետո ոչ մի նիստ չի արվել ավելի քան մեկ տարի /բացի ձևական երկու նիստ սկսելով և անմիջապես հետաձգելով/:

- Գործի դատաքննությունն ավարտվել է այդ փաստաթղթին 14 ամիս անցանց հետո՝ 11.03.2013թ.:

Վճիռ է կայացել 28.03.2013 թվականին:

- Այսպիսով, գործը դատավորի վարույթում է գտնվել մոտ 2 տարի երեք ամիս:

Հայցվորների փաստարկները և հիմնավորումները.

Նախ հայտնում են, որ դատարանը ճիշտ չի շարադրել իրենց փաստարկները և հիմնավորումները:

Իրենց դատավարական դիրքորոշումը հետևյալն է՝ հայցվորները հայց են հարուցել ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ Գյումրու տարածքային ստորաբաժանման՝ գույքի նկատմամբ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի՝ իրենց զբաղեցրած 350քմ. մասով անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջի մասին:

Պահանջի համար հիմք է հանդիսացել այն, որ հակառակ ՀՀ կառավարության 09.02.1998 թվականին 81 որոշման, 15.04.2002թ. Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքը Գյումրի, Տիգրան Մեծի 1 հասցեի շենքի նկատմամբ գրանցելիս, պատասխանողի կողմից ՀՀ օրենսդրության խախտմամբ գրանցվել է նաև այդ շենքին կից Թբիլիսյան խճուղի /ներկայումս Խրիմյան Հայրիկ/ 59 հասցեի շենքը: Ընդ. որ պատկանել է ՀՀ կապի նախարարությանը, տիրապետել է կապի հանգույցը որպես բնակելի հանրակացարան, որտեղ օրենքով սահմանված կարգով՝ օրդերով, բնակարանային հաշվառմամբ, տասնյակ տարիներ բնակվում են կապի հանգույցի նախկին աշխատակիցներ հայցվորներն իրենց ընտանիքներով՝ 33 անձ:

Շիրակի մարզպետարանն իր սեփականության իրավունքի գրանցումից մեկ շաբաթ անց՝ 23.04.2002թ., շենքը նվիրաբերության պայմանագրով նվիրվել է «Պրոգրես համալսարան» ԱԿ-ին, որը գրանցել է իր սեփականության իրավունքը շենքերի նկատմամբ և դատական կարգով պահանջում է շենքի բնակիչներին վտարել իրենց բնակարաններից/ գործի վարույթը կասեցված է/, թվով 33 անձի, որից 12-ը անչափահաս, իսկ 2-ը այս դատական վեճերի փուլում՝ մահացած: Արդեն առկա է երկու վճիռ Թբիլիսյան խճուղի 59 հասցեի երկու բնակարաններից վտարման մասին:

Հայցվորները դիմել են դատական պաշտպանության: Համապատասխան փաստաթղթերի ձեռքբերմամբ պարզվել է, որ բնակարանային իրավունքների ունեւորումը սկսվել է նրանից, որ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային ստորաբաժանումում պետական գրանցման ժամանակ իրավունքի գրանցման համար հիմք է ընդունվել ոչ թե Կառավարության 09.02.1998 թվականի թիվ 81 որոշումը, որով ՀՀ կապի նախարարության տնօրինմանը պատկանող կապի հանգույցի 2400քմ. ծավալով շենքերից Շիրակի մարզպետարանի տնօրինմանն է հանձնվել ընդամենը Գյումրի, Տիգրան Մեծի 1 հասցեի շենքը՝ 2050քմ. մակերեսով շենքը, այլ գրանցման հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 10-ի թիվ 15 որոշումը, որը վերաբերում է արդեն Շիրակի մարզպետարանի հաշվեկշիռ փոխանցված 2050քմ. մակերեսով Գյումրու Տիգրան Մեծի շենքի 1 հասցեի, նախկին կապի շենքի հետագա տնօրինմանը, որտեղ նշում չկա ոչ ք.Գյումրի, Թբիլիսյան խճուղի 59 հասցեի շենքի ոչ էլ գրանցվող շինության չափերի մասին:

Փաստորեն, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային ստորաբաժանումն առանց շենքերը Շիրակի մարզպետարանին հատկացման որոշման, առանց հատկազծային և մակերեսային չափումների հիմքերի, կամայական մոտեցմամբ, Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքն է գրանցել ք.Գյումրի, Թբիլիսյան խճուղի 59 հասցեի շենքի նկատմամբ: Պարզվել է, որ շինության մակերեսային չափերի համար պատասխանողը հիմք է ընդունել մարզպետի կողմից տրված 08.04.2002թ. կեղծ տեղեկանքը Տիգրան Մեծի թիվ 1 շինության հաշվեկշիռային տվյալների

մասին, ըստ որի, իբր Մարզպետարանի հաշվեկշիռ է փոխանցվել 3131.02քմ. մակերեսով շինություն:

Մակերեսային չափ, որի համար որևէ փաստաթղթային հիմնավորում չկա և չի պահանջվել պատասխանողի կողմից գրանցում կատարելիս:

Մակերեսային չափ, որը հակասում է և ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 9-ի թիվ 81 որոշմանը և ՇՄ մարզպետարանի կողմից 18.01.1999թ. ակտին:

Կադաստրային գործին կցված է նաև արխիվային տեղեկանք այն մասին, որ Լենքաղտվետի գործկումի 26.09.1952թ. 25 նիստով 3000քմ. հող է հատկացվել կապի հանգույցին շենքեր կառուցելու համար կից ուրվագծով:

- 1952թ. տրված այդ տեղեկանքը և հողամասի ուրվագիծը չէր կարող 2002 թվականին իրավունքի գրանցման հիմք հանդիսանալ, երբ այնտեղ ոչ մի խոսք չկա Շիրակի մարզպետարանին հատկացվող հողամասի չափի մասին:

Այդ տեղեկանքում 3000քմ. հողամասի չափը մակերեսային չափ է: Այդ հողամասի վրա կառուցվել է ոչ միայն Գյումրու Տ.Մեծի թիվ 1 2050քմ շենքը այն կից կապի հանգույցին պատկանող հանրակացարանը Գյումրու Թբիլիսյան խճուղի 59 հասցեով, կից նախկին Լենինի պողոտայի տարբեր նպատակային նշանակությամբ օգագործվող շենքեր՝ փոստի շենքը, հեռախոսային կապը, աշխատողների հանրակացարանները: Դրանցից մի մասը իր նպատակին է ծառայում առ այսօր, մի մասն էլ սեփականաշնորհված է հանրակացարանի բնակիչների կամ այլ անձանց որպես բնակելի շինություններ և կապ չունեն նշված շենքերի հետ:

Ասվածը հաստատվում է նրանով, որ Մարզպետարանին տրվել է սեփականության իրավունք է գրանցվել ոչ թե 3000քմ. հողամասի, այլ՝ 1858,52քմ. հողամասի նկատմամբ, որից ակնհայտ է, բերված արխիվային փաստաթուղթը մարզպետարանին հատկացվող շինության հետ որևէ կապ չունի, որ 3000քմ. հողամասի նկատմամբ իրավունք չի գրանցվել, որ 1858,52քմ. հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հիմք կադաստրային գործում չկա: Կադաստրային գործում հիմք չկա նաև 3131.02քմ. մակերեսով շինության գրանցման վերաբերյալ:

- Պետական գրանցման ժամանակ Գյումրու Թբիլիսյան խճուղի թիվ 59 հասցեի շենքը ներառվել է Տ.Մեծի թիվ 1 հասցեի մեջ:

Կադաստրային գործից չի երևում և բացակայում են հիմքեր, թե ինչ կարգով է Կառավարության կողմից հատկացված 2050քմ-ը դարձել 2012.02քմ. գումարած 698,98քմ. նկուղը, գումարած Թբիլիսյան խճուղի 59 հասցեի շենքի 350քմ. բնակելի տարածքը և 120.17քմ. նկուղային մասը:

Ի դեպ խնդրի կապակցությամբ նյութերով քննություն է կատարվել ՇՄ քննչական բաժնի կողմից, և հաստատվել է խախտման փաստը:

Դատական կարգով խնդրում են հայցվորները իրենց բնակարանների օգտագործման իրավունքի պաշտպանություն, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 278 հոդվածի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքերով, քանի որ իրենց զբաղեցրած բնակարանների նկատմամբ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքի ապօրինի գրանցմամբ իրենք զրկվում են օրենքով սահմանված կարգով բնակարանների օգտագործման և հետագայում սեփականաշնորհման իրավունքից:

Իսկ ներկա սեփականատեր «Պրոգրես համալսարան» Ա/Կ-ն դատական կարգով վտարում է պահանջում /գործը կասեցված է/, որի դեպքում 5 ընդամից՝ 31 մարդ կմնան անօթևան, քանի որ նրանք անապահով խավից են և որևէ մեկը այլ բնակարան չունի և չի էլ կարող երազել:

Խոսք գնաց Թբիլիսյան խճուղի 59 շենքի գոյության մասին: Այդ խնդիրը առաջացել է ընդամենը վերջերս «Պրոգրես համալսարանի» կողմից առնվազն թյուրիմացություն ստեղծելու համար:

Հասցեի առկայության փաստը հաստատում է նաև ՇՄ առաջին առյանի դատարանի թիվ 2-120-2003թ. քաղաքացիական գործով ուժի մեջ մտած 02.06.2003թ. վճռով, որտեղ 2 ընտանիքների նկատմամբ վտարման վճիռ է կայացվել Թբիլիսյան խճուղի թիվ 59 շենքի 3 և 4 բնակարանների հասցեով: Այդ հասցեով ԴԱՀԿ բաժնի կողմից վտարման գործողություններ են կատարվել /որը հետագայում դադարեցվել է/ այդ հասցեից և կա տեսանքի:

Եթե անգամ հասցեն նույն Գյումրու Տ.Մեծի թիվ 1 հասցեով լիներ, դա հայցվորներին չէր զրկում նույն իրավունքից, քանի որ սույն պահանջի հիմքը ոչ թե հասցեն է, այլ Շիրակի մարզպետարանի հաշվեկշիռ ապօրինաբար փոխանցված 350քմ. տարածքը, որը



մարզպետարանը տնօրինելու իրավունք չունեն, այդ մասում փաստացի ապրում են հայցվորները, որոնք գրկվում են իրենց բնակության և բնակարանները սեփականաշնորհելու իրավունքից:

Ինչ մնում է ՀՀ կառավարության կողմից Կապի նախարարության հաշվեկշիռ թուլված 350քմ. տարածքը համապատասխանում է Գյումրու Թլիխյան խճուղի թիվ 59 շենքի բնակարանների բնակելի տարածքներին թե ոչ, հայտնում է, որ Մարզպետարանի սեփականության իրավունքի վկայականում «շինության տվյալներ» բաժնում շենքի տվյալներից առանձնացվել է բնակելի մասնաշենքը՝ 300.65քմ., 120.57քմ. նկուղ չափերով, իսկ մնացած 50քմ. տարածքը Լենինի հրապարակ 1-ին /ա/ շենք թիվ 6 բնակարանն է, որտեղ բնակվում է այժմ հանգուցյալ Ֆ.Սարգսյանի ընտանիքը, այդ բնակարանը նույնպես ներառված է Գյումրի, Տիգրան Մեծի թիվ 1 հասցեի մեջ և պահանջում են վտարել բնակիչներին:

Երբ Կապի նախարարության ներկայացուցիչը միջնորդեց երրորդ անգամ ներգրավել Պետական գույքի կառավարման վարչությանը, արդեն հիմնավորեց, որ ինքը չի ցանկանում տեղ կանգնել իր գույքին և հրաժարվել և հրաժարվում է նրանից, որի գնահատականը թողնում է դատարանին:

Այսպիսով, Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքի գրանցումը Գյումրու Տիգրան Մեծ թիվ 1 հասցեի շինության նկատմամբ կատարվել է «Գույքի գրանցման մասին» ՀՀ օրենքի 21, 24 և 43-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 09.02.1998 թվականին թիվ 81 որոշման և ՀՀ Կառավարության 2001 թվականի հունվարի 10-ի թիվ 15 որոշման, «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի 06.05.1997 թվականի հրամանագրի պահանջների, ինչպես նաև ՇՄ մարզպետարանի կողմից 18.01.1999 թվականի ակտին, ըստ որի մարզպետարանի հաշվեկշիռ է փոխանցվել ընդամենը 2050քմ. մակերեսով շինություն և որպես վերը նշված օրենքներին հակասող, հայցվորները խնդրել են՝

- Մասնակի անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու ՏՄ-ի կողմից կատարված 15.04.2002թ. Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքի գրանցումը, կառավարության որոշմամբ Կապի Նախարարությանը թողնված հայցվորների զբաղեցրած 350քմ. մակերեսով բնակելի շենքի մասով, նկուղային մասի հետ: Կիրառելով անվավերության հետմանը՝

- Մասնակի անվավեր ճանաչել Շիրակի Մարզպետարանի և «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբեռատիվի միջև 23.04.2002թ. կնքած նվիրաբերության պայմանագիրը՝ Գյումրու, Տիգրան Մեծի պողոտա թիվ 1 հասցեով «Պրոգրես համալսարան» Ա/Կ-ի 02.05.2002թ. սեփականության իրավունքի պետական գրանցումը, ՀՀ կառավարության որոշմամբ Կապի Նախարարությանը թողնված հայցվորների զբաղեցրած 350քմ. մակերեսով բնակելի շենքի մասով, շենքի նկուղային մասի հետ միասին:

Պատասխանողի ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ փաստաթղթերը և հիմնավորումները.

Պատասխանող ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու ՏՄ հայցը չի ընդունել, դատարանին, սակայն ներկայացուցչի բացատրություններով, ներկայացրած փաստաթղթերով և գրված պատասխանով փաստորեն չի առարկել հայցի դեմ, հայտնելով, որ կադաստրի կողմից իրավունքի պետական գրանցումը Շիրակի մարզպետարանի անվամբ կատարվել է ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 10-ի թիվ 15 որոշման հիման վրա, իսկ գույքի օտարումը «Պրոգրես» համալսարանին կատարվել է համաձայն 23.04.2002թ. նվիրաբերության պայմանագրի: Հայտնել է, որ Շիրակի մարզպետարանի կողմից իրենց չի ներկայացվել ՀՀ կառավարության թ. 81 որոշումը, եթե ներկայացնեին, ապա հաշվի կառնվեր: Ներկայացրել՝ կադաստրային գործից գրանցման հիմք հանդիսացող փաստաթղթերը: Կադաստրային գործում առկա չէ գրանցման համար հիմք հանդիսացող 1998թվականի փետրվարի 9-ի թ. 81 որոշումը, Կադաստրային գործում առկա չէ փոխանցվող գույքի փաստացի հատակագիծը, պարզվել է, որ մարզպետարանը իր հաշվեկշիռում գտնվող շինության մակերեսը ներկայացրել է ոչ թե 2050քմ-ի, այլ տեղեկանք է տվել 3131.02քմ մակերեսով շինություն հաշվեկշիռ ընդունելու մասին: Իսկ այդ ժամանակվա գրանցման բաժնի պետ Վ.Արշակյանը քննչական բաժնում տված իր բացատրությամբ մանրամասնել և հայտնել է, որ եթե թ.81 որոշումից տեղյակ լինեին, ապա այդ չափի շինություն չէին գրանցի Շիրակի մարզպետարանի անվամբ:

Երրորդ անգամ Շիրակի մարզպետարանի դիրքորոշումը դատարանը սխալ է ներկայացրել: Մարզպետարանի ներկայատուցիչը հայց չընդունելով, պասիվ դիրքորոշում ընդունեց, ըստ էության ոչ մի առարկություն չներկայացնելով իրենց կողմից ներկայացրած ապացույցների և փաստական հանգամանքների դեմ: Իսկ մարզպետարանի իրավունքի գրանցման ժամանակ թույլ տված խախտումները ընդունել է իր բացատրությամբ այդ ժամանակվա մարզպետ Ֆ.Փիրումյանը /տես

գործում բացատրությունը/, որը ինքնին արդեն դիրքորոշում է: Ինչ մնում է նրան քե՛ ինչ հակասական փաստաթղթերի մասին է խոսքը այդ հարցին այդպես էլ մարզպետարանը չպատասխանեց: Այդ հակասական փաստաթղթերը հետևյալն է՝

1. Նույն մարզպետարանի կողմից 2010թ. հայցվորների տրված ընդունման-հանձնման ակտի պատճենը, ք. 81 որոշմամբ Մարզպետարան հաշվեկշիռ 2050 քմ մակերեսով շինություն մասին:

2. Նույն մարզպետարանի կողմից գույքի պետական գրանցման համար 2002թ. ԱԳԿ Գյումրու Տ/Ս-ին տրված 08.04.2002թ. կեղծ տեղեկանքը Գյումրու Տիգրան Մեծի ք.1 շինության հաշվեկշիռային տվյալների մասին, ըստ որի 15 որոշմամբ իբր մարզպետարանի հաշվեկշիռ է փոխանցվել 3131.02 քմ մակերեսով շինություն:

Երրորդ անձ «Պրոգրես» ԱԿ-ի դիրքորոշումը.

Դատարանը վերադասավորերել է, լրացրել է երրորդ անձի դիրքորոշումը, հարմարեցնելով վճռի մեկնաբանություններին: ՄԻՆՀԼ վճռի բեկանվելը ԱԿ-ն մեծ պատճառաբանություններ և բացահայտում իրենց չի արել, ինչ արեց վերջին նիստում:

Հայցը չի ընդունել, հայտնելով, որ ինքը օրինական կարգով է ստացել սեփականության իրավունքը:

- ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 9-ի թիվ 81 որոշման հիման վրա Գյումրու կապի հանգույցի շենքը՝ 2050 քմ մակերեսով՝ 1999թ. հունվարի 18-ին կազմված ակտով ընդունվել է Շիրակի մարզպետարանի հաշվեկշիռ, իրավունքը գրանցվել ապա ՀՀ կառավարության 10.01.2001թ. թիվ 15 որոշման համաձայն նվիրաբերվել է «Պրոգրես համալսարան» արտադրական կոուպերատիվին, որը ստացել է պետական գրանցում: ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 81 որոշմամբ փոստատան շենքի 2400քմ մակերեսից 350քմ թողնվել է ՀՀ կապի նախարարության սնօրինության տակ որպես հեռախոսակայան օգտագործելու համար, որը հարակից է «Պրոգրես համալսարան» ԱԿ-ին նվիրաբերված շենքին ըստ հատակագծի 1-2 հատվածի «փնջը ցույց է տրված ՀՀ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքի վկայականում:

- Կապի հանգույցի աշխատակիցների հանրակացարանը հանդիսացել է Պրոգրես համալսարան ԱԿ-ին նվիրաբերված շենքի բակում գտնվող մեկ հարկանի շենքը, որը Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 11.09.2003թ. թիվ 2-1261 վճռով Գյումրու քաղաքապետարանի հայցով ճանաչվել է տիրագույր:

- Գյումրի քաղաքում Թբիլիսյան խճուղի 59 /1-խրիմյան Հայրիկ 59/ հասցեավորմամբ շենք գրանցված չէ, և որ 350 քմ տարածքը հայցվորների գրադեցրած տարածքը չէ:

ՀՀ կապի և տրանսպորտի նախարարությունը, հայցադիմումի պատասխան չի բերել: Սակայն գործում առկա է մի քանի գրավոր պատասխաններ, որ իրենց չի փոխանցվել կառավարության կողմից ՀՀ կապի նախարարությանը թողնված կապի հանգույցը՝ 350 քմ շենքը, ուստի ներկայումս էլ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ ՊԿՀ-ի հաշվապահական հաշվեկշռում այն չկա:

Դատարանի կողմից հաստատված համարված փաստերը.

- Ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի 17.04.1981 թվականի թիվ 5 միասնական օրդերի համաձայն՝ Վաղինակ Պողոսյանին որպես հանրակացարան տրվել է Թբիլիսյան խճուղի թիվ 59 տան 1-ին մուտքի 1-ին հարկի թիվ 5 բնակարանը:

- Ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի 17.04.1981 թվականի միասնական օրդերի համաձայն՝ Հովսեփ Գալոյանին որպես հանրակացարան տրվել է Թբիլիսյան խճուղի թիվ 59 տան 1-ին մուտքի 1-ին հարկի թիվ 1 բնակարանը:

- Ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի 17.04.1981 թվականի թիվ 6 միասնական օրդերի համաձայն՝ Ֆելիքս Սարգսյանին որպես հանրակացարան տրվել է Թբիլիսյան խճուղի թիվ 59 տան 1-ին մուտքի 1-ին հարկի թիվ 6 բնակարանը:

17.04.1981 թվականի միասնական օրդերներով հայցվորներին հատկացված տարածքները կապի հանգույցից մեկուսացված են եղել: Անհասկանալի և անհիմն մեկնաբանություն:

Դատարանի կողմից հաստատված մյուս հանգամանքները Գյումրու Տիգրան Մեծի այլ հասցեներով այն սեփականատերեր լինելու մասին բացարձակապես կապ չունի վիճելի շենքի և իրենց հետ, որոնց հասցեները չի խախտվել վիճարկվող ապօրինի պետական գրանցմամբ:



Դատարանի կողմից չգնահատված, բայց գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներն են.

- Գործում է գտնվում տեղեկանքներ, պետական մարմինների գրություններ, իրենց անձնագրերը բնակարանային հաշվառումներով, երրորդ անձանց կողմից ընդունված փաստական հանգամանք, որ իրենք ավելի քան 20-ից 40 տարի բնակվում են Գյումրի, Թբիլիսյան խճուղի 59 շենքի այն բնակարաններում, որը սխալ պետական գրանցման հետևանքով անցել է Մարգալետարանին, ապա «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի սեփականությանը և իրենց կացարանները կորցնելու և անօթևան մնալու վտանգի տակ են:

- Փաստ է, որ ՀՀ կառավարության՝ 1998թ. փետրվարի 9-ի թիվ 81 որոշմամբ ՀՀ կապի նախարարության տնօրինության ներքո գտնվող կապի հանգույցի շենքի 2400քմ տարածքից 2050քմ հանձնվել է Շիրակի մարզպետարանի տնօրինությանը, իսկ մնացած 350 քմ տարածքը թողնվել է ՀՀ կապի նախարարության տնօրինության ներքո:

Անվիճելի փաստ է, որ Շիրակի մարզպետարանի անվամբ 2050 քմ-ից ավել գրանցված տարածքը կապի հանգույցին պատկանող հանրակացարանը, զբաղեցրած է իրենց բնակարանների կողմից Գյումրի Թբիլիսյան խճուղի 59 շենքի հասցեով, անկախ նրանից թյուրիմացաբար քն միտումնավոր, մարզպետարանի կողմից շենքը օտարելու առաջարկում և կառավարության որոշման մեջ հանրակացարանը հեռագրատում է գրառվել:

Փաստ է, որ կառավարության կողմից մարզպետարանի հաշվեկշիռ փոխանցված 2050քմ մակերեսով տարածքի փոխարեն Շիրակի մարզպետարանի սեփականությանն է անցել 3131.02 քմ մակերեսով շինություն:

Հաստատված է, որ Կապի նախարարության հաշվեկշիռ թողնված 350քմ մակերեսով շինությունը նախարարության հաշվեկշիռ չի ընդունվել /կարծում են ոչ պատահական այլ միտումով / և չի փոխանցվել իրավահաջորդին: Պետական գույքը յուրացվել է:

- Փաստ է, որ ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 10-ի թիվ 15 որոշմամբ Շիրակի մարզպետարանի տնօրինության ներքո գտնվող նախկին փոստատան շենքի, որը ըստ հաշվեկշռի 2050 քմ է եղել, վերակառուցման և հետագա տնօրինման իրավունքով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 10-ի թիվ 15 որոշումը՝ Շիրակի մարզպետարանը «Պրոգրես համալսարան» ԱԿ-ին է նվիրաբերվել Գյումրու Տիգրան Մեծի թիվ 1 հասցեով նախկին փոստատան եռահարկ շենքը: Հիշյալ պայմանագրից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում 02.05.2002թ. և տրամադրվել է թ. 519310 սեփականության իրավունքի վկայականը:

Որ իրենց բնակարանները ունեն առանձին հասցե, որը կարծում են ի սկզբանե մարզպետարանի կողմից /նախապես «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի հետ համագործակցված/ կառավարությանը թյուրիմացության մեջ է գցել Տիգրան Մեծի 1 հասցեի տակ ցույց տալով, հաստատվում է հայցվորների անձնագրերում Թբիլիսյան խճուղի թ. 59 շենքի հասցեի գրանցմամբ սկսած 1970 ական թվականներից:

Հասցեի առկայության փաստը հաստատվում է գործում առկա փաստաթղթերում իրենց հասցեների գրառումը, տարիների ծանուցումները ՀՀ նախագահից, ՀՀ վերահսկողության ծառայությունից, Շիրակի մարզպետարանից, Գյումրու քաղաքապետարանից, տարբեր դատարաններից և հենց երրորդ անձ «Պրոգրես համալսարան» ԱԿ-ից:

Գործում է գտնվում շենքի թիվ 3 և 6 բնակարանների բնակիչների 2003թ. վտարման վճիռը Թբիլիսյան խճուղի /ներկա Խրիմյան Հայրիկ/ թիվ 59 հասցեից:

Գործում է գտնվում տեղեկանքներ «Բնակապասարկում» ՓԲԸ-ից վիճելի Թբիլիսյան խճուղի թ. 59 շենքում հայցվորների բնակության վերաբերյալ:

Գործում է գտնվում հայցվորների բնակարանային օրդերները, ընտանիքների կազմի, բնակարանային հաշվառումների, անչափահասների, թոշակառուների, հաշմանդամների մասին գրավոր փաստաթղթեր՝ Թբիլիսյան խճուղի 59 շենքի հասցեով:

Գործում է գտնվում 13.12.2011թ. գրությունը Գյումրու քաղաքապետարանից Թբիլիսյան խճուղին «Խրիմյան Հայրիկ» վերանվանվելու մասին:

Գործում է գտնվում շենքի սեփականության վկայականը և հատակագիծը, հայցվորների զբաղեցրած մասով:

Գործում է գտնվում Շիրակի մարզպետարանի կողմից տրված տեղեկանքը Տիգրան Մեծի թիվ 1 շենքը՝ 2050 քմ մակերեսով, և ակտը՝ այն ՀՀ կառավարության 81 որոշման հիման վրա հաշվեկշիռ ընդունելու մասին:

- Գործում է գտնվում կադաստրային գործով գրանցման համար հիմք ներկայացրած փաստաթղթերը՝ Շիրակի մարզպետի հաշվեկշռային տեղեկանքը 3131 քմ շինության մասին, ՀՀ կատարարության թիվ 15 որոշման պատճենը, արխիվային տեղեկանք այն մասին, որ Լենքաղտովետի գործկոմի 26.09.1952թ. թիվ 25 նիստով 3000քմ հող և հատկացվել կապի հանգույցի շենք կառուցելու համար՝ կից ուրվագծով, որոնցից ոչ մեկը հիմք չէ իրավունքի գրանցման համար:

- Գործում է գտնվում «Արմենթել» ՀՁ ՓԲԸ-ի տնօրենի 21.11.03 թվականի տեղեկանքը, այն մասին, որ 350քմ մակերեսով տարածքը չի հանձնվել մարզպետարանին և թողնվել է կապի նախարարությանը, հաշվի առնելով այն, որ 1978 թվականից նշված տարածքում բնակվում են կապի հանգույցի աշխատակիցները, մինչև օրս միասնական օրդերով և գրանցումով:

Գործում է գտնվում Շիրակի նախկին մարզպետ Փիրումյանի, իր ձեռքով գրված բացատրությունը քննչական բաժնի նյութերից մակերեսի չափի սխալ տեղեկանք տալու մասին:

Գործում է գտնվում պատասխանող ՏՍ-ի նախկին գրանցման բաժնի պետ Վահե Արշակյանի՝ իր ձեռքով գրված բացատրությունը քննչական բաժնի նյութերից մարզպետարանի անվամբ սխալ գրանցում կատարելու մասին:

Գործում է գտնվում ՀՀ կապի նախարարության կողմից 2002թ. տրված գրությունը, Թբիլիսյան խճուղի 59 հասցեով 350 քմ տարածք իր հաշվեկշռում չգտնվելու մասին:

Գործում է գտնվում ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության կողմից 2009 թվին տրված գրությունը այն մասին, որ Կապի նախարարության կողմից 350քմ տարածք իրենց հաշվեկշիռ չի փոխանցվել:

Գործում է գտնվում ՀՀ կառավարության թիվ 81 և 15 որոշումները՝ իրենց ողջ բովանդակությամբ:

Հաստատված է այն համազմանքը, որ հայցվորներ Տիգրան Մեծի հասցեով հաշվառում չեն ունեցել և չունեն:

Հաստատված է, որ տասնյակ տարիներ 7 ընտանիք բնակվում են հենց 350քմ տարածքում, որը 350քմ է՝ համաձայն Շիրակի մարզպետարանի և «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի սեփականության վկայականի հատկագծային չափերի:

Հաստատված է, որ Շիրակի մարզպետարանի անվամբ գրանցված է եղել թե ոչ թե 2050 այլ 3131.02 քմ մակերեսով տարածք, որն իր հաշվեկշռում չի ունեցել:

Շիրակի մարզպետարանի գրությունը ուղղված ԱԿ-ին Ֆ.Սարգսյանի ընտնիքը Տիգրան Մեծի 1ա հասցեում բնակվելու, իսկ մնացած 6 ընտանիքները Թբիլիսյան խճուղի 1-6 բնակարաններում ապրելու մասին:

Գյումրու քաղաքապետարանի 06.03.2006թ. գրությունը, որ իր հաշվեկշռում Թբիլիսյան խճուղի շենք չկա, որը նշանակում է, որ 2006թ. դրությամբ չկա, քանի որ այն ապօրինաբար 2008թ. արդեն ներառված է եղել Տիգրան Մեծի 1 հասցեում:

Գնահատման ենթակա է գործում առկա «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի գրությունը ուղղված «Ուրբան» ինստիտուտի ԲԳՎ ծրագրին 07.10.2003թ., որով ընդունել է այն փաստը, որ գործով հայցվոր 5 ընտանիքները /թվում է ըստ անունների և ընտանիքի թվի/ բնակվում են շենքում և որ խանգարում են իր շինարարությանը և որ կանգնած են փողոցում հայտնվելու վտանգի առջև, քանզի չի լուծվում փոխհատուցմամբ բնակարանով ապահովելու հարցը և խնդրում են իրենց ընդգրկել ԲԳՎ ծրագրում հաշվի առնելով իրենց կարիքավորությունը և որ բնակարան չունեն:

Գործում է գտնվում ԲԳՎ ծրագրի ղեկավարի պատասխանը 21.10.2003թ., որ չեն կարող բավարարել պահանջը, քանի որ իրենք երկրաշարժից անօթևան չեն:

Չնայած գործում է գտնվում կապի հանգույցի նախկին աշխատակիցներ լինելու մասին փաստաթղթեր և այդ խնդիրը քննարկվել է գործով, /հենց բնակարանի հատկացման օրդերներով /սակայն հաշվի առնելով վճռում դատարանի կողմից վկայակոչած այն միտքը, որ չեն ապացուցել, որ իրենց բնակարանները տնօրինելու ժամանակ եղել են կապի հանգույցի աշխատակիցներ, որը դրվել է իրենց մերժման հիմքում՝ իրենց համարելով ոչ պատշաճ հայցվորներ, ուստի դատարանին ներկայացնում են վճռից հետո տրված երկու տեղեկանք՝ տրված «Արմենթել» ՓԲԸ-ի կողմից 17.04.2013թ., ըստ որի հայցվորների բնակարանները տնօրինելու ժամանակ ընտանիքի անդամներից շարունակել են աշխատել կապի հանգույցում ապա կապի համակարգում Ֆ.Սարգսյանը մինչև 2005 թվականը և Հ.Գալոյանը մինչև 2006 թվականը, Ա.Պողոսյանի աշխատանքային գործը արխիվացված է, /ժամանակը սուղ է նոր տեղեկանք վերցնելու/, իսկ Ախուրյանի փոստային մասնաճյուղի 22.04.2013թ. տեղեկանքով հաստատվում է, որ Վաղինակ Պողոսյանի կինը իրավահաջորդ Արև Պողոսյանը կապի հանգույցում աշխատում է



1973թվականից առ այսօր «Հայփոստ» ՓԲԸ-ի Ախտորյանի փոստային մասնաճյուղում: Այդ փաստաթղթերը խնդրում է ընդունել և գնահատել որպես ապացույց, դրանց անարժեշտությունը առաջացել է վճռի բովանդակությունից:

Դատարանի եզրահանգումները.

Վարչական դատարանը գտել է, որ հայցը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- Դատարանը հաստատված է համարել, որ իրավունքի պետական գրանցման ժամանակ տեղի է ունեցել սխալ՝ Մարգարետարանի անվամբ գրանցվելով նաև ՀՀ կապի նախարարությունը հանձնված 350քմ տարածքը: Եվ այլևս չի անրադարձել այդ մասով վեճին և չի վկայական տալով իր գրանցման ժամանակ պատասխանողի կողմից խախտված օրենքները:

Դատարանը հաստատված է համարել, որ անկախ այն հանգամանքից, որ իրավունքի պետական գրանցման ժամանակ տեղի է ունեցել սխալ, այդուհանդերձ այդ գրանցմանը հայցվորների որևէ իրավունք չի խախտվել, հետևաբար մարգարետարանի անվամբ հաստատված իրավունքի պետական գրանցման իրավաչափության հարցում հայցվորները հանդիսանում են ոչ պատշաճ հայցվորներ, հետևաբար վերջիններիս կողմից ներկայացված հայցը ենթակա է իրենց ժման:

- Ապացույցները տեղում զննելու արդյունքում, Դատարանը հաստատված է համարել, որ հայցվորների զբաղեցրած տարածքները ֆիզիկապես գտնվում են «Պրոգրես» արտադրական կոոպերատիվին պատկանող 2050 քմ տարածքի մեջ:

Բացի այդ, Դատարանը հաստատված է համարել, որ ք.Գյումրի «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի զբաղեցրած շենքում, առկա են արդյոք այլ անձանց անվամբ գրանցված իրավունքներ:

Դատարանը եզրահանգել է, որ հայցվորները չեն հիմնավորում, թե իրավունքի պետական և մանրօրինակ գրանցումը իշպիսի հետևանքներ է գործել, արդյոք դրանով խախտվել են իրենց համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները, եթե այո, ապա որ իրավական ակտով սահմանված որ իրավունքն ու ազատությունն է խախտված և ինչ կերպ: /Բնակության իրավունքը /:

Դատարանը ակնհայտ հաստատված է հանգամանք է համարել, որ օրդերներով Վաղինակ Պողոսյանին, Հովսեփ Գալոյանին և Ֆելիքս Մարգարյանին հատկացված հանրակացարանի բնակարանները վերջիններիս են հատկացվել միայն օգտագործման իրավունքով, որպիսի իրավունքն էլ իր իրավաբանական ուժը պահպանած է եղել վերջիններիս կողմից կապի հանգույցում իրականացրած աշխատանքի ժամանակամիջոցի ընթացքում: Այլ կերպ ասած, անձանց հատկացված բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցվում է աշխատանքային հարաբերությունների դադարեցման պահից: Հետևաբար, վիճելի տարածքների նկատմամբ հայցվորները չեն ունեցել որևէ իրավունք, հետևաբար գոյություն չունեցող իրավունքն էլ չէր կարող խախտված լինել վիճարկվող գրանցմամբ: Եվ որ հայցվորները չեն ապացուցել, որ գրանցման պահին, իրենք հանդիսացել են կապի հանգույցի աշխատակիցներ:

- Դատարանը հաստատված է համարել, որ հայցվորների օրդերների ուսումնասիրությունից հաստատվում է, որ դրանք կապի հանգույցից մեկուսացված են եղել:

Դատարանը հետևություն է արել, որ հայցվորների կողմից սույն հայցադիմումով ներկայացվել են նաև մի շարք ածանցյալ պահանջներ: Պայմանավորված այն հանգամանքով, որ ներկայացված հիմնական պահանջը դատարանի կողմից մերժվում են, հետևաբար հետևանքների վերացման ածանցյալ պահանջները ենթակա են մերժման նույնպես:

Դատարանի կողմից կիրառվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և նույն օրենսգրքի 26-րդ հոդվածը, գտել է, որ կիրառման ենթակա չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածը: Չի կիրառել «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին» ՀՀ օրենքների 21, 23, 43 հոդվածների խախտմամբ:

Այսպիսով, դատարանը գտել է, որ հայցը ենթակա է մերժման ամբողջությամբ:

Բողոքի հիմքերը և հիմնավորումները.

Վեճի լուծման համար մինչև սույն վճիռը քննարկման խնդիր է եղել մեկ հարց՝ վիճարկվող վարչական ակտը ՀՀ օրենքի խախտմամբ է կայացվել, թե ոչ:

Անվիճելի է եղել հայցվորների պատշաճության հարցը ի սկզբանե գործը վարույթ ընդունելիս և վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ:

Սույն վճռով դատարանը հաստատված և անվիճելի համարելով պետական գրանցումը խախտմամբ կատարելու փաստը, այսինքն վարչական ակտի ապօրինությունը, հայցի մերժման մեկ այլ խնդիր է հայտնաբերել հայցվորների պատշաճության հարցը, այն որ իրենց որևէ իրավունքը չի խախտվել այդ սխալ գրանցմամբ, ուստի Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ մասի համաձայն, շահեր չունեն գործում:

Ընդունելով այն փաստը, որ դատարանը հաստատված է համարել խախտմամբ գույքի պետական գրանցման հանգամանքը, չենք անդրադառնում այդ խնդրին և այդ պահանջի հաստատման հիմք խնդրում են ընդունել իրենց դատավարական դիրքորոշումը և դատարանի եզրահանգումը:

Ներկայացնում են հիմնավորումներ պատշաճ հայցվորներ լինելու և դատարանի դիրքորոշման անհիմն լինելու մասին:

- Դատարանի կողմից խախտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22 հոդվածի պահանջները: Գործում առկա ապացույցների օբյեկտիվ հետազոտություն չի կատարել, ճիշտ չի գնահատվել:

Դատարանի իրավական վերլուծությունները ակնհայտ սուբյեկտիվ են, մեկնաբանությունները անհիմն, ենթադրյալ, կամայական, դրանք չեն բխում գործի փաստական հանգամանքներից և առկա գրավոր ապացույցներից, չունեն օրենսդրական հիմնավորում:

Դատարանի վերլուծությունները հակասում են միմյանց և ավելի շատ հիմնավորում են իրենց պահանջը:

Կիրառված օրենքները կամ սխալ է մեկնաբանվել, կամ սխալ է կիրառվել: Կիրառման ենթակա օրենքներ չի կիրառվել:

Այսպես՝

Վճռաբեկ դատարանի վերլուծություններից հիմնավորվում է, որ իրենց պատշաճ հայցվորներ են, որով էական է համարվել այդ տարածքները օրդերով իրենց հատկացվելու փաստը, կարևորելով նաև «ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ հեռահաղորդակցության Հյուսիս-Արևմտյան տարածքի տնօրենի 21.11.2003 թվականի թիվ 0-088 տեղեկանքը «կապի նախարարության տնօրինության տակ գտնվող Գյումրու կապի հանգույցի նախկին շենքի 2.400 քմ ընդհանուր տարածքից «կառավարության 09.02.1998 թվականի թիվ 81 որոշմամբ, 350 քմ բնակելի տարածքը Թբիլիսյան խճուղի 59 հասցեով չի հանձնվել Մարգալետարանին և թողնվել է «կապի նախարարությանը խճուղի 59 հասցեով չի հանձնվել Մարգալետարանին և թողնվել է «կապի նախարարությանը հաշվի առնելով այն, որ 1978 թվականից մինչ օրս նշված տարածքում միասնական օրդերով և գրանցումով բնակվում են հանգույցի աշխատակիցները, որով հաստատել է իրենց պատշաճ հայցվոր լինելու հանգամանքը:

Սույն հաստատված փաստը չկարողանալով հերքել, դատարանը իր անհիմն ենթադրություններով, փորձել է երրորդ անձ «Պրեզբես համալսարանին» օգնել իր ստեղծագործական մտքով, այն է՝ գուտ իր կարծիքի հիման վրա որպես ոչ պատշաճության հիմք, համոզմունք է հայտնել, որ իրենց աշխատանքային հարաբերությունները դադարելու պահից, հանրակացարանի նկատմամբ դադարել է իրենց իրավունքը, միաժամանակ նշելով, որ իրենց ապացույց չեն բերել գրանցման-ժամանակ կապի հանգույցի աշխատակիցներ լինելու մասին: Այդ հիմքով էլ հայցը մերժել է:

Նման եզրահանգման համար դատարանը որևէ ապացույց չի ունեցել, չի գրել ինչից է ենթադրել, որ իրենց իրավունքները դադարել են, կամ երբ է դադարել, կամ ինչքանով է էական այն, ավելի քան 20-ից 40 տարի փաստացի ապրողների համար:

Որպես այդ կապակցությամբ կիրառման ենթակա օրենք դատարանը գրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ բնակարանային օրենսգրքի (ուժը կորցրել է 04.10.05 ՀՕ-197-Ն օրենք) 104-րդ հոդվածը սահմանում էր, որ հանրակացարաններում բնակելի մակերեսը բանվորներին, ծառայողներին, հատկացվում է աշխատանքի կամ ուսման ժամանակամիջոցի համար ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության ադմինիստրացիայի, արհմիութենական կոմիտեի և կոմերիտմիության կոմիտեի համատեղ որոշմամբ՝ պահպանելով հանրակացարանների համար սահմանված նորման:

Դատարանը հաստատված համարելով, որ «Ակնհայտ է, որ օրդերներով Վաղինակ Պողոսյանին, Գուսեի Գալոյանին և Ֆելիքս Սարգսյանին հատկացված հանրակացարանի բնակարանները վերջիններիս են հատկացվել միայն օգտագործման իրավունքով» անհիմն



հետքություն է արել, որ իրենց այդ իրավունքն իր իրավաբանական ուժը պահպանած է եղել կապի հանգույցում իրականացրած աշխատանքի ժամանակամիջոցի ընթացքում: Այլ կերպ ասած, անձանց հատկացված բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցվում է աշխատանքային հարաբերությունների դադարեցման պահից...: Դատարանը մոռանալով, որ գործով ընդամենը փաստական հանգամանքներ է բնութագրելու, մնալ է գրահանգմամբ գերազանցել է իր լիազորությունները, առանց օրենսդրական հիմնավորման, անհիմն հետևություններով իրենց իրավունքը դադարեցված է համարել /մնալ օրենք չի եղել և չկա/ քանի որ օգտագործման իրավունքի դադարեցման իրավունքը կապի հանգույցի իրավունք է եղել, որով և ցանկացել և չի օգտվել իր իրավունքից և չէր էլ կարող օգտվել ստորև թվարկվող պատճառներով և արգելող օրենքով:

Այսօր փաստ ունեն, որ իրենց օգտագործման իրավունքը չի դադարեցվել և գտնվում է իրենց տիրապետության տակ: Գործում չկա որևէ ապացույց, որ որևէ մարմնի կողմից դադարեցվել է իրենց իրավունքը իրենց զբաղեցրած տարածքների նկատմամբ: Իսկ բնակիչների դադարեցումը ինքնաբերաբար չէր կարող լինել, դրա համար պետք է համապատասխան ընթացակարգ և վարչական ակտ, որը գոյություն չունի:

Դատարանի կողմից նախկին բնակարանային օրենսգրքի 104 հոդվածով ղեկավարվելով սխալ է թույլ տվել: Այդ օրենքը վերաբերում է հանրակացարաններում բնակելի մակերես հատկացնելու կարգին, ուստի այն կիրառելի չէ, որը կիրառվել է դատարանի կողմից:

Սույն դեպքում կիրառելի է նախկին բնակարանային օրենսգրքի 102 և 105 հոդվածները, որոնք վերաբերվում է հանրակացարաններից վտարելու կարգին, որը չգիտես ինչու դատարանը չի նկատել և չի կիրառել միտումնավոր, իրենց պատշաճ հայցվոր չհամարելու նկատառումով: Համաձայն նախկին Բնակարանային օրենսգրքի 105 հոդվածի հանրակացարանից կարող են վտարվել առանց այլ բնակման հատկացնելու, եթե աշխատանքից ազատվել են սեփական ցանկությամբ, առանց հարգելի պատճառների, աշխատանքային կարգապահությունը խախտելու կամ հանցագործություն կատարելու համար: Օրենքը շարունակում է այլ հիմքերով աշխատանքը դադարեցրած անձինք. ինչպես նաև նույն օրենսգրքի 102 հոդվածում թվարկված անձինք կարող են վտարվել միայն նրանց մեկ այլ բնակելի տարածություն հատկացնելով:

Իսկ 102 հոդվածում թվարկված է այն անձանց ցանկը, որոնց կամ չի թույլատրվում ընդհանրապես վտարել, այն էլ առանց այլ բնակելի տարածություն հատկացնելու, այդ թվում բնակելի տարածություն հատկացրած հիմնարկում առնվազն 10 տարի աշխատած անձինք:

Աշխատողների թվի կամ հաստիքի կրճատման կապակցությամբ աշխատանքից ազատված անձինք, ծերության կենսաթոշակառուները և այլն: Իրենց պարագայում առկա է բոլոր պայմանները: Եթե նախորդ տարիները չհաշվեն, ապա համաձայն գործում գտնվող 17.04.1981 թվականի տրված օրդերների ակնհայտ է, որ 17.04.1981 թվականից կապի հանգույցի աշխատողներ են եղել հայցվորներ Ֆելիքս Սարգսյանը, Վաղինակ Պողոսյանը և Հովսեփ Գալոյանը, ինչպես նաև իրավահաջորդ Արև Պողոսյանը 1973 թվականից /ավելի քան 10 տարի/: Վաղինակը և Հովսեփը աշխատանքից ազատվել են հաստիքների կրճատման պատճառով/, իսկ Ֆելիքս Սարգսյանը կենսաթոշակի անցնելու պատճառով, որի կապակցությամբ արխիվային հիմքերը կներկայացնեն լրացուցիչ կարգով ժամանակի սղության, դատաբնության պահանջված չլինելու և ավելի վաղ անրաժեշտություն չառաջանալու պատճառով: Այս պայմաններից մեկի առկայությունը /իրենց պարագայում օրդերները/ բավական էր, իրենց օգտագործման իրավունքը պահպանած համարելու: Իսկ երկրաշարժից հետո, երբ բոլորը շարունակում էին աշխատել կապի հանգույցում կառավարության համապատասխան որոշմամբ հանրակացարանները թողնվել են բնակիչներին որպես բնակելի տարածքներ:

Ամեն դեպքում հենց դատարանը հաստատված է համարել, որ այդ բնակարանները իրենց է հատկացվել է օգտագործման իրավունքով, իսկ դադարեցման ապացույց չի վկայակոչել, ուստի շարունակում են մնալ օգտագործողներ և խախտվել է իրենց օգտագործման իրավունքը, որից օգտվում են առ այսօր:

Որը նշանակում է, որ դատարանի կողմից խախտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածով իրենց օգտագործման և 274 հոդվածով պաշտպանված իրավունքը:

Դատարանը շատ լավ մեկնաբանելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին դրույթները, սակայն այն չի կիրառել հայցը բավարարելու համար, որով խախտել է այդ օրենքի պահանջները:

Համաձայն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին վարչական դատարան դիմելու իրավունք ունեն այն անձինք, որոնք համարում են, որ խախտվել են իրենց իրավունքները վարչական ակտերով, եթե խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել օրենքներով ամրագրված իրավունքները, այդ թվում խոչընդոտներ են հարուցել այդ իրավունքների իրականացմանը: Անձը կարող է դիմել դատարան, երբ հանդիսանում է շահագրգիռ անձ, այսինքն, վարչական մարմնի կողմից խախտվել են անձի հանրային սուբյեկտիվ իրավունքները:

Անձինք չեն կարող դատարանում հայցել անձամբ իրենց չվերաբերող որևէ վարչարարության ստուգում:

Դատարանը գրում է, որ նշվածից հետևում է, որ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել, եթե դրանով անմիջականորեն խախտվել կամ կարող էր խախտվել անձի՝ ՀՀ սահմանադրությամբ «միջազգային պայմանագրերով օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված որևէ իրավունք կամ ազատության, և հատկապես այն դեպքում, երբ խախտումը կարող է վերացվել կամ կանխվել վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելով:

Սակայն, դատարանը ճիշտ հետևություն չի արել իր առաջադրած այն հարցերին, թե հայցվորները միևնույն ժամանակ չեն հիմնավորում, թե իրավունքի պետական մասնօրինակ գրանցումը իշխսի հետևանքներ է գործել, արդյոք դրանով խախտվել են իրենց համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները, եթե այո, ապա որ իրավական ակտով սահմանված որ իրավունքն ու ազատությունն է խախտված և ինչ կերպ:

Սեկնաբանությունը ճիշտ է, սակայն դատարանը չի ղեկավարվել դրանցով, իսկ դատարանի առաջադրած այս հարցերի պատասխանը առկա է գործում, որը դատարանը չի ցանկացել նկատել:

Այո, վիճարկվող վարչական ակտով անմիջականորեն խախտվել և խախտվում է արդեն նշված ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրենց իրավունքներն ու ազատությունները:

Անվիճելի է, որ անցած դարի 70-80-ական թվականներից բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ, բնակարանային հաշվառմամբ, կոմունալ վճարումների արժեքներն առանցքային քարտերով, իրենց կողմից ներկա զբաղեցրած տարածքները ապօրինաբար ներառված են նախ Շիրակի մարզպետարանի, ապա «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի սեփականության մեջ և սույն վճիռը ուժի մեջ մտնելուց հետո կհաջորդի իրենց վտարման դատական գործը, որը առկա է ՇՄ ընդհանուր իրավասության դատարանում և կասեցված է սույն գործի հիմքով: Ի դեպ արդեն 2 վտարման վճիռ կա, որոնք կատարված չեն:

Այսինքն, վարչական ակտով անմիջապես խախտվել է քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով առկա և 274 հոդվածով պաշտպանված իրենց իրավունքը: Այդ օրենքների խախտում է թույլ տվել նաև դատարանը այդպիսիք չկիրառելով:

Եթե անգամ օգտագործման իրավունք ունեցող չհամարվեին, ապա շարունակում են մնալ գործի ելքով շահեր ունեցող պատշաճ հայցվորներ հետևյալ հիմնավորմամբ օրենքը պաշտպանում է նաև վարչական ակտի հետևանքով իրենց հետագա իրավունքների պաշտպանությունը:

Անվիճելի է այն փաստը, որ վարչական ակտի խախտումը վերացնելուց հետո իրենց զբաղեցրած տարածքը կմնա տիրազուրկ, քանի որ այն Կապի նախարարության հաշվեկշռում չկա, իսկ ՇՄ ընդհանուր իրավասության դատարանում կասեցված է հայցվորների հայցով ձեռք բերման վաղեմությամբ բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործը, որը բավարարելուն խոչընդոտում է վիճարկվող վարչական ակտը, իրենց բնակարանները թողնելով ապօրինի ձեռք բեա՞ծ սեփականության մեջ, դրանով գրկելով իրենց սեփականության իրավունքը ճանաչելու ավելի քան 10 տարի տիրազուրկ գույքի նկատմամբ:

Ուստի ճիշտ չէ դատարանի հետևությունը այն մասին, որ իրենք շահեր չունեն սույն գործում: Իրենց պահանջը բխում է հենց Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և 1 ա կետի պահանջներից վիճարկվող վարչական ակտը խոչընդոտներ է հարուցվել քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածով իրենց իրավունքների իրականացման համար:



Դատարանը հաստատված է համարել, որ կառավարության կողմից Կապի նախարարությանը թողնված 350 քմ տարածքը իրենց զբաղեցրած տարածքը չէ: Ավելին, հիմնավորված է համարել նաև, որ 17.04.1981 թվականի միասնական օրդերներով հայցվորների հատկացված տարածքները կապի հանգույցից մեկուսացված են եղել: Դատարանը իր պատճառաբանությունը հիմնավորել է նրանով, որ Կառավարության որոշման մեջ 350քմ տարածքը թողնված է որպես հեռախոսակայան:

Եթե դատարանի տրամաբանությունը ճիշտ համարեն, ապա իրենց զբաղեցրած տարածքները Կապի նախարարությունը չի պատկանել, այդ դեպքում ինչպես է այն տնօրինվել Կառավարության կողմից որպես կապի հանգույցին պատկանող գույք, որը վճռով հաստատված է համարել դատարանը հետևություն անելով, որ իրենց զբաղեցրած 350քմ տարածքը ֆիզիկապես գտնվում է կառավարության կողմից Շիրակի Մարզպետարանին հատկացրած 2050քմ տարածքում: Դատարանի վերլուծությունները հակասում են միմյանց:

- Դատարանը ենթադրյալ վերլուծություն է կատարել, որ ՀՀ կառավարությունը ֆիզիկապես չէր կարող քաղաքացիներով բնակեցված և միևնույն ժամանակ կապի հանգույցից մեկուսացված տարածք հատկացնել Կապի նախարարությանը որպես հեռախոսակայան /միտումնավոր կամ թյուրիմացաբար Մարզպետարանի առաջարկում ներկայացված/: Հակասելով ինքն իրեն դատարանը, միաժամանակ եզրահանգել է, որ իրենց բնակարանները ֆիզիկապես գտնվում են 2050քմ տարածքում, որից հետևում է, որ ՀՀ կառավարությանը քաղաքացիներով բնակեցված տարածքը հատկացրել է Մարզպետարանին: Անդրադառնում են նախորդ եզրահանգմանը, այդ դեպքում ինչպես կարող էր Կառավարությունը բնակիչներով ծանրաբեռնված բնակարանները հատկացնել Մարզպետարանին այլ անձանց մվիրաբերելու համար:

Հետևությունը մեկն է Կառավարությունը չէր կարող և օրինական կարգով զբաղեցրած բնակարանները հատկացնել Մարզպետարանին տնօրինելու առանց իրենց բնակարանային խնդրի լուծման և որ դատարանը գործով ակնհայտ իր սուբյեկտիվ մոտեցմամբ այս անհիմն տրամաբանությամբ փորձում է իրենց իրավունքների խախտման «մեղքը» բարդել Կառավարության վրա:

Դատարանը վճռում գրում է՝ «ապացույցները տեղում զննելու արդյունքում Դատարանը հաստատված է համարում, որ հայցվորների զբաղեցրած տարածքները ֆիզիկապես գտնվում են «Պրոգրես» արտադրական կոոպերատիվին պատկանող 2050քմ տարածքի մեջ: Պարզ չէ, թե գործում առկա որ ապացույցներն է տեղում զննվել:

Երբ գործում և ընդհանրապես չկա Կառավարության որոշմամբ մարզպետարանին հատկացրած 2050քմ տարածքի ուրվագիծը /փաստացի հատակագիծը/,

Երբ կադաստրային գործում չկա մարզպետարանին հատկացրած 2050քմ տարածքի ուրվագիծը /փաստացի հատակագիծը/,

Երբ գործում չկա մասնագիտական եզրակացություն, ըստ որի իրենց զբաղեցրած տարածքը ֆիզիկապես գտնվում է կառավարության կողմից մարզպետարանին հատկացրած 2050 քմ տարածքի մեջ,

Երբ գործում առկա է միայն կադաստրային գործի հիմքերում և Շիրակի մարզպետարանի սեփականության վկայականում օրենքների խախտումով գրանցված 3131.02քմ տարածքի հատակագիծը արդեն ապօրինի ավել գավթած տարածքի հետ: Ավել տարածք, որի փաստը ընդունել է դատարանը սույն վճռում:

Դատարանը առանց շինարարական փորձաքննության եզրակացության եզրակացություն է արել այն մասին, թե «Պրոգրես» արտադրական կոոպերատիվին պատկանող տարածքը և թե այլ տարածքները գտնվում են մեկ միասնական շենքում:

Միթե դատավորը նաև համապատասխան լիցենզավորված փորձագետ է, որ շինությանը նայելով գուշակել է, որ իրենց զբաղեցրած տարածքը ֆիզիկապես գտնվում է հենց 2050 քմ տարածքի մեջ կամ կից շինությունը պետք է համարել մեկ միասնական շենք:

Արված մեկնաբանություններից հարց է առաջանում, որին դատարանը վճռով չի պատասխանել եթե հատկացրածից ավել գրանցված տարածքը իրենց զբաղեցրած տարածքը չէ, իրենց տարածքը մտնում, է 2050քմ-ի մեջ, ապա թ. 81 որոշմամբ մարզպետարանին 2050 քմ տարածքից ապօրինաբար ավել գրանցված տարածքը /դատարանը ընդունել է այդ փաստը/ որտեղ է գտնվում , որ կողմում ում է պատկանում , երբ իրենց բնակարաններից և «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի զբաղեցրած տարածքից բացի մյուս կից տարածքները ունեն այլ սեփականատերեր, որ դատարանը 14 ամսվա ջանասիրությանբ ապացուցեց:

Ինչպես կարող էր իրենց գրադեցրած տարածքը գտնվել 2050-րմ տարածքում, երբ իրենց գրադեցրած շենքը Թլիխյան խճուղի թիվ 59 առանձին հասցեով օրդերավորված և ամրացված է իրենց անվամբ. երբ առանց իրենց տարածքի Մարզպետարանի սեփականությանը փոխանցված միայն կենտրոնական շենքը կապի բաժին գրառմամբ կազմում է մոտ 2050-րմ այն էլ Տիգրան մեծի 1 հասցեով: Ինչով բացատրել, որ Մարզպետարանի սեփականության վկայականում իրենց շենքը հողամասի տվյալներում գրառված է որպես առանձին շենք թիվ 2 համարով բնակելի շենք նպատակային նշանակությամբ:

Ինչով բացատրել, որ իրենց շենքին հարող փողոցը ըստ Մարզպետարանի սեփականության վկայականի 4-5 համարակալման գրառված է Խրիմյան Հայրիկ խճ. շենքի վրա առկա է տասնյակ տարիների շենքի համարակալումը թ. 59, որը նկարահանված գտնվում է գործում և որը տեսել է դատավորը տեղագնության ժամանակ, հանկարծ դատավորը պարզում է, որ իրենց շենքը այդ հասցեն չի ունեցել այլ եղել է Տիգրան մեծի 1 հասցեի մաս:

Դատարանի կողմից գործի քննության 14 ամսվա հետաձգմամբ, հաստատված մյուս հանգամանքները Գյումրու Տիգրան Մեծի այլ հասցեներով այն սեփականատերեր լինելու մասին բացարձակապես կապ չունի վիճելի շենքի և իրենց հետ, քանի որ այդ տարածքները գտնվում են Մարզպետարանին հատկացրած 2050-րմ ճարտարապետական առումով գլխամասային տեսքով շենքի աջ մասում որպես առանձին շենք, որոնց իրավունքները չի խախտվել վիճարկվող ապօրինի պետական գրանցմամբ: Գլխամասային շենքի ձախ կողմում նրանցից մոտ 200 մետր հեռավորության վրա մոտավոր գուգահեռ դիրքում է գտնվում իրենց շենքը առանձին հասցեով:

Դատարանը հերքական անհիմն և ենթադրյալ հետևություն է կատարել իրենց օրդերների ուսումնասիրությունից, գրելով օրդերների ուսումնասիրությունից երևում է, որ հայցվորներին որպես հանրակացարան օգտագործելու համար հատկացված տարածքները կապի հանգույցից դեռևս 1981թ. ապրիլի 17-ից եղել են մեկուսացված: Դատարանի կողմից կատարվել է իրենց օրդերների ակնհայտ սխալ մեկնաբանություն:

Գուցե դատավորի հայերեն տառերը այլ ձևով կամ իմաստով է գրվում, որ չի տեսել, տարրական կրթություն ունեցող անձի գիտակցությանը հասանելի օրդերների պարզ շարադրանքն այն մասին, որ «Տրվում է հանրակացարան կապի հանգույց գրադեցնելու Թլիխյան խճուղի Թ.59 շենքի, բնակելի թ. 1, 1 սենյակ կապի հանգույցի ֆոնդից, ... քմ մակերեսով մեկուսացված կոմունալ հարմարություններով: Ծանոթություն Հ.Գալոյան,,: Նույն շարադրանքը մյուս օրդերներում միայն սենյակների թվի և հատկացվող անձանց անունների տարբերությամբ /տես գործում և կից օրդերների պատճենները/: Ինչը պարզ չէ, որ դատարանը երևակայական եզրահանգում է կատարել, որ իբր մեկուսացված ասելով, պետք է հասկանալ հայցվորներին որպես հանրակացարան օգտագործելու համար հատկացված տարածքները կապի հանգույցից դեռևս 1981թ. ապրիլի 17-ից մեկուսացված տարածք: Այդպես էլ չպարզաբանելով, թե ինչ նպատակ է հետապնդում նման եզրահանգումը: Երբ օրդերում պարզ շարադրված է, որ խոսքը հատկացված բնակելի տարածքի մեկուսացված կոմունալ հարմարություններ ունենալու մասին է, ոչ թե ընդհանուր կոմունալ հարմարություններով հանրակացարանի սենյակի /որը ընդունված էր 1981 թվականին, կամ կապի հանգույցից մեկուսացման:

Դատարանը ընդունելով, որ իրենց բանկարանները ներառված են 2050 քմ տարածքի մեջ զարմանալիորեն եզրահանգել է, որ գրանցման վարչական ակտով իրենց իրավունքները չի ուտնահարվել: Բավական է այդ համոզմունքը, հաստատված համարելու իրենց իրավունքների խախտումը: Որ պատշաճ հայցվորներ են վիճարկվող որոշմամբ, հաստատվում է գործում գտնվող փաստաթղթերով գործում է գտնվում հայցվորների անձնագրերի պատճենները Թլիխյան խճուղի թ. 59 շենքի գրանցմամբ սկսած 1981 թվականներից: Եթե նշված հասցեով առանձին շենք գոյություն չի ունեցել, ինչով բացատրել ավելի քան 30 տարի Ոստիկանության անձնագրային բաժնում նշված հասցեով հայցվորների ընտանիքի անդամների բնակարանային հաշվառմամբ բնակեցումը, ինչով բացատրել, որ իրենց բոլոր փաստաթղթերը մանկապարտեզ, ուսումնական հաստատություններ, աշխատանքի վայր, սոցիալական ապահովության բաժին սոցիալական ծառայություն, զինծառայություն դատարանի ծանուցագրերը, բոլոր հաշվառումները անցնում են Թլիխյան խճուղի /այժմ Խրիմյան Հայրիկ/ 59 շենք հասցեով: Ինչպես են սույն դատարանի ծանուցումները իրենց հասնում Խրիմյան Հայրիկ թ. 59 հասցեով: Եթե գոյություն չունի նման հասցե, փոստը ինչպես է առաքում ծանուցումները այդ հասցեով:

Առանձին շենքի և հասցեի առկայության փաստը հաստատվում է Գործում առկա փաստաթղթերում իրենց հասցեների գրառումը, տարիների ծանուցումները ՀՀ նախագահից, ՀՀ



վերահսկողության ծառայությունից, Շիրակի մարզպետարանից, Գյումրու քաղաքապետարանից, տարբեր դատարաններից և այլն:

Գործում է գնվում ՇՄ առաջին ատյանի դատարանի ք. 2-120 -2003թ. քաղաքացիական գործով ուժի մեջ մտած 02.06.2003թ. վճիռ, որտեղ 2 ընտանիքների նկատմամբ վտարման վճիռ է կայացվել Թբիլիսյան խճուղի Թ. 59շենքի 3 և 4 բնակարանների հասցեով: Եթե նման հասցեով չենք գոյություն չունի, ինչպես է երրորդ անձ «Պրոգրես համալսարան» ԱԿ հայց հարուցել այդ հասցեով և խնդրել, որ բնակիչները վտարվեն այդ հասցեից: Ինչպես է կատարվելու վճիռը, երբ առկա է ըստ վճռի գոյություն չունեցող հասցեից, հարկադիր կատարողական վարույթ:

Այդ հասցեի առկայության փաստը հաստատում է հենց «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի նորը հիմա առարկում է այդ փաստի դեմ/, իր սկզբնական հայցադիմումների շարադրանքներում չենք բնակիչների հասցեների նշումով, երբ դեռ «Բարձր մակարդակով» չէին որոշել, որ Թբիլիսյան խճուղի Թ. 59 հասցե գոյություն չունենալու կեղծ և շինծու տարբերակը կարող է իրենց փոխել դատական ակտի հիմքում դրվելով:

Գործով պատշաճ հայցվոր լինելու հանգամանքը հաստատում է նաև գործում առկա Պրոգրես համալսարան ԱԿ-ի գրությունը ուղղված Ուրբան ինստիտուտի ԲԳՎ ծրագրին 07.10.2003թականին, որով ընդունել է այն փաստը, որ գործով հայցվոր 5 ընտանիքներ /թվում է ըստ անունների և ընտանիքի թվի/ բնակվում ենք շենքում և որ խանգարում են իր շինարարությանը և որ կանգնած են փողոցում հայտնվելու վտանգի առջև, քանզի չի լուծվում փոխհատուցմամբ բնակարանով ապահովելու հարցը և խնդրում են իրենց ընդգրկել ԲԳՎ ծրագրում հաշվի առնելով իրենց կարիքավորությունը և որ բնակարան չունեն:

- Գործում է գտնվում ԲԳՎ ծրագրի ղեկավարի պատասխանը 21.10.2003 թվականին, որ չեն կարող բավարարել պահանջը, քանի որ իրենք երկրաշարժից անօքևան չեն: Դատարանը չի գնահատել այս փաստաթղթերը, որոնք նույնպես հաստատում են, որ իրենք գործով պատշաճ հայցվորներ են, որ և Մարզպետարանը իր բազմաթիվ գրություններով և ԱԿ-ի տնօրենը, ընդունելով, որ բնակվում են իր սեփականությունը հանձնված տարածքում և գտնվում են փողոցում հայտնվելու վտանգի տակ, ուստի իրենց բնակարանային իրավունքն է խախտվում վիճարկվող վարչական ակտով:

Դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածի դրույթները, գրելով, որ անհրաժեշտ է, որ հայցվորները վիճելի տարածքները օգտագործելիս լինեն օրենքով կամ պայմանագրով սահմանված կարգով: Տվյալ պարագայում հայցվորների համար առկա չէ որևէ պայմանագիր կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմք: Առավել ևս երբ բնակարանը հանրակացարան է: Այդ կապակցությամբ գործում կա կապի հանգույցի ղեկավարների տեղեկանքը համապատասխան ստորագրությամբ, որ իրենց աշխատավարձերից պահվել է բեակվարձ, որպես օգտագործողներ:

Նախ բնակարանները օգտագործում են նախկին բնակարանային օրենքով սահմանված կարգով օրդերով և բնակարանային հաշվառմամբ, և այն ժամանակվա օգտագործման իրավունքի համար պայմանագիր նախատեսված չէր: Նախկին հատկացված բնակարաններից և ոչ մեկը առ այսօր պայմանագրով չեն զբաղեցնում: Իսկ իրենց օգտագործման իրավունքը ընդունել է նաև դատարանը վճռով, գրելով, որ դատարանը հաստատված է համարել, որ «Ակնհայտ է, որ օրդերներով Վաղինակ Պողոսյանին, Հովսեփ Գալոյանին և Ֆելիքս Սարգսյանին հատկացված հանրակացարանի բնակարանները վերջիններիս են հատկացվել միայն օգտագործման իրավունքով /տես վճիռը/:

Այս պարագայում դատարանի դիրքորոշմամբ օգտագործման պայմանագրի անհրաժեշտության մասին խախտվում է Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջը՝ կամայականության արգելքը: Երբ այսօր պետական բնակարաններում ապրող և նախկին և ներկա հատկացումներով ոչ մի անձ պայմանագրով իր օգտագործման իրավունքը չի գրանցում և հատկացման որոշման կամ նախկին օրդերների հիմքով համարվում են օգտագործման իրավունք ունեցողներ, նույնանման պայմաններում դատարանը իրավասու չէ իրենց համարել օգտագործման իրավունք չունեցող:

ՀՀ Սահմանադրական դատարանը, իր ՍԳՈ -747 և 17.04.2012թ. ՍԳ-1022 որոշումներով մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 19-րդ, վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածները, արձանագրել է, որ անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր խախտված իրավունքները: Սահմանադրության այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ

անձը դատարան դիմելու իր իրավունքը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առընթյամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է կոնկրետ գործով, գործը քննող դատարանի կողմից, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից:

ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010թ. թիվ ՎԴ/4342/05/10 որոշմամբ, անրադառնալով ՀՀ վարչական դատարանի 3-րդ հոդվածի մեկնաբանությանը, արձանագրել է՝ «Նշվածից հետևում է, երբ անձն իր իրավունքների դատական պաշտպանության համար կարող է հայց հարուցել միայն այն դեպքում, երբ գտնում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով... անմիջականորեն խախտվել կամ կարող է խախտվել նրա իրավունքները կամ օրինական շահերը»:

Նշվածից հետևում է, որ վարչական արդարադատություն հայցող անձի պահանջը կարող է բավարարվել միայն նրա շահագրգիռ անձ լինելու դեպքում, եթե խախտվել է կամ կարող է խախտվել նրա ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով ամրագրված կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները: Նույնպիսի դիրքորոշում ՀՀ վճռաբեկ դատարանը արտահայտել է նաև 04.03.2011թ. ՎԴ/4671/05/08 գործերով:

Ակնհայտ է, որ այս նախադեպային որոշումները կիրառելի են հայցը բավարարելու համար, որը դատարանը չի կիրառել, քանի որ գործով ակնհայտ շահագրգիռ անձ են և վիճարկվող վարչական ակտով խախտվել է իրենց բնակարանների օգտագործման իրավունքը /դատարանը ըստ օրոգրների գործով ընդունել է իրենց օգտագործման իրավունքը/, ինչպես նաև զրկվում են ձեռք բերման վաղեմությամբ սեփականության իրավունքի ճանաչման դատական պաշտպանությունից: Իրենց իրավունքները պաշտպանված են վերը նշված օրենքներով:

Այսպիսով, դատարանի կողմից խախտվել է «Գույքի գրանցման մասին», ՀՀ օրենքի 21, 24 և 43 հոդվածների, ՀՀ կառավարության 09.02.1998 թվականին թիվ 81 որոշման և ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 10-ի թիվ 15 որոշման, քաղաքացիական օրենսգրքի 225, 274-րդ հոդվածները, քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածի պահանջները վկայակոչված նախադեպային որոշումները, Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և 1) ա կետի պահանջներից վիճարկվող վարչական ակտը խոչընդոտներ է հարուցվել քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածով, նախկին բնակարանային օրենսգրքի 102 և 105 հոդվածի Վարչական դատավարության օրենսգրքի 22 հոդվածների պահանջները:

Սույն ապօրինի վճիռը ծանր հետևանք է առաջացնում իրենց համար:

Վճիռը ուժի մեջ մտնելու դեպքում հաջորդող վճռով փողոցում կհայտնվեն աղքատ խավին պատկանող 33 մարդ՝ ծերեր, կանայք, երեխաներ, հաշմանդամներ, որոնք ոչինչ չեն ունենա հայրենիքի հետ կապող և ամեն անկանխատեսելի քայլին ընդունակ կլինեն, քանի որ ավելի քան 11 տարի իրենց բնակարաններում հանգիստ քուն չունեն օլիգարխների ամենագոր կամայականության պատճառով:

Խնդրում են բեկանել է վարչական դատարանի թիվ ՎԴ-5/0546/05/09 վարչական գործով 27.03.2013թ. վճիռը, և քանի որ գործում առկա է բավարար ապացույցներ վերջնական ակտ կայացնելու համար, խնդրում են ապացույցների օբյեկտիվ գնահատմամբ կայացնել իրենց հայցի բավարարման վճիռ:

2.1 «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի ներկայացուցիչ Ի.Վանոյանի իրավական դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ- 5/0546/05/09 վարչական գործով 27.03.2013թ. կայացրած վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի Ֆ. Սարգսյանի իրավահաջորդ Լ. Սարգսյանի և մյուսների (այսուհետ բողոք բերողներ) վերաքննիչ բողոքը գտնում է անհիմն ու մերժման ենթակա, քանի որ՝

1. ՀՀ վարչական դատարանի (այսուհետ Դատարան) կողմից կատարվել է հանգամանալից քննություն գործում առկա բոլոր ապացույցների հետազոտումից զատ ի պաշտոնե ձեռք բերելով նաև այլ ապացույցներ և հավաքված ու գործով առկա բոլոր ապացույցները անմիջականորեն գնահատելով Դատարանը հանգել է ճիշտ եզրակացության՝ մերժել բողոք բերողների հայցը: Եվ բողոք բերողների պատճառաբանությունն առ այն, որ Դատարանի կողմից խախտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի պահանջների խախտում, ակնհայտ անհիմն է, քանի որ նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն Դատարանն ի պաշտոնե պարտավոր էր ձեռք բերել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցը,

կոնկրետ դեպքում ՀՀ ԿԱ ԱԳ-Կ ՊԿ-ի նախագահի տեղակալի 07.03.2013թ. ԱՄ/7.1/1405-13 գրությամբ, որն ուղղակիորեն ցույց է տալիս ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 81 որոշմամբ Կապի նախարարությանը թողնված 350 քմ. տարածքի տեղն ու հետագա ճակատագիրը:

2. Բողոք բերողները հայցը ներկայացրել էին մի այնպիսի շենքի բնակարանների պահանջով, որն անգամ, որպես այդպիսին Գյումրի քաղաքում պետական գրանցում չունի: Ավելին, անգամ եթե այդպիսի շենք էլ լիներ միևնույն է բողոք բերողների պահանջը վերաբերվում էր հանրակացարանի և ոչ թե բնակարանի, այն էլ մի այնպիսի կազմակերպության հանրակացարանի, որը բազմաթիվ տարիներ է, որ գոյություն չունի, իսկ այդ կազմակերպության նախկին շենքը որպես պետական գույք տնօրինվել է ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 81 և 10.01.2001թ. թիվ 15 որոշումներով: Ընդ որում, նշված որոշումներով սահմանվել էր կապի հանգույցի նախկին շենքի մասերով հատկացման կարգն ու հետագա օգտագործման նպատակները ուսումնական և հեռախոսակայանի օգտագործման նպատակով, ինչն էլ ՀՀ կառավարության որոշումներին համապատասխան կատարվել է Շիրակի մարզպետարանին հատկացված մասը օգտագործվում է ուսումնական նպատակով, իսկ ՀՀ կապի նախարարությանը թողնված հատվածը որպես հեռախոսակայան:

Հետաքրքրական է, որ բողոք բերողները ընդհանրապես անդրադարձ չեն կատարում ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության գրություններին, համաձայն որոնց Թբիլիսյան խնդրի թիվ 59 շենք նախարարության հաշվեկշռում չկա, ՀՀ ԿԱ ԱԳ-Կ ՊԿ նախագահի տեղակալի գրությամբ, որը ցույց է տալիս, թե որտեղ է եղել հեռախոսակայանը կամ, որ Կապի նախարարության որոշ տարածք անցել է Հայփոստին, թե Շիրակի մարզպետարանի, թե Պրոգրես համալսարանի սեփականությունը գրանցելիս սեփականության իրավունքի գրանցման վկայականների 1-2 հատվածին, որտեղ ցույց է տրվում, որ այդ հատվածին հարակից է կապի հանգույց:

Ավելին, բողոք բերողները այս պայմաններում պնդում են իրենց ինչ որ բնակարանային իրավունքների մասին տարբերություն չդնելով հանրակացարանի ու բնակարանի միջև, չընդունելով, անգամ օրենսդրական կարգավորումն առ այն, որ հանրակացարանը հանդիսանում է գերատեսչական կոմունալ բնակտարածություն և ոչ թե բնակարան ու այս պայմաններում փորձում են ներկայացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ և 274-րդ հոդվածներով նախատեսված իրենց խախտված իրավունքների մասին, մոռանալով, որ ՀՀ գործող քաղաքացիական օրենսգիրք գործողության մեջ է դրվել Կապի հանգույցի շենքը տնօրինելուց հետո և իրենց ու կապի հանգույցի միջև առաջացած հարաբերությունները պետք է կարգավորվեն ուժը կորցրած Բնակարանային օրենսգրքով, ընդ որում հանրակացարաններին վերաբերվող իրավանդություններով: Ինչը նշանակում է, որ բողոք բերողները պատշաճ հայցվորներ հանդիսանալ չեն կարող, առավել ևս այն կապակցությամբ, որ բողոք բերողները անվիճելի են համարում այն փաստը, որ զբաղեցրած տարածքների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն ճանաչվելու է իրենց սեփականության իրավունքը և մարզպետարանի սեփականության իրավունքի գրանցումը խոչընդոտում է այդ իրավունքի իրականացմանը, ընդ որում այդ ճանաչումն էլ ներկայացնում են այնպես, կարծես այդ իրավունքն արդեն ճանաչված է ու մարզպետարանի սեփականության իրավունքի գրանցումն էլ խոչընդոտում է իրավունքի իրականացմանը: Այսինքն, բողոք բերողներն իրենց այս իսկ պնդումով, անգամ, ցույց են տալիս, որ մինչ այս պահը տարածքները տիրապետել են ոչ թե հատկացման հիմքով, այլ բոլորովին այլ հիմքով:

3. Բողոք բերողներն, անգամ, ՀՀ կառավարության որոշմամբ կապի հանգույցին հեռախոսակայանի համար հատկացված տարածքն են համարում թյուրիմացություն կամ միտումնավոր արված, ինչը լրացուցիչ անգամ ցույց է տալիս, որ հանրակացարանի կարգավիճակը չեն պատկերացնում: Չնայած, որ ելնելով Դատարանի վճռից բողոք բերողները փորձում են ցույց տալ, որ իրենք ինչ որ հիմքով պահպանել են իրավունքները զբաղեցրած հանրակացարանին տարածքների նկատմամբ, դարձյալ մոռանալով, որ Լենինի պողոտա 1 հասցեում գտնվող նախկին կապի հանգույցը տեղափոխվել էր այլ շենք Աստղի հրապարակում, Լենինի պողոտա 1 հասցեի շենքը վթարայնության հետևանքով լքված էր և շենքի հետագա ճակատագիրը լուծելու համար է, որ ՀՀ կառավարությունը կայացրել իր 81 և 15 որոշումները, ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 9-ի որոշումն ընդունելիս այլևս այդ շենքը կապի հանգույցին չէր պատկանում և դրա համար է, որ ՀՀ կառավարությունն օգտագործում է կապի հանգույցի նախկին շենք արտահայտությունը: Իսկ ինչ վերաբերվում է բողոք բերողների այն պնդմանը, որ

կառավարության որոշմամբ 350 քմ թողնվել է իրենց որպես բնակարան, ապա դա միայն բողոք բերողների ցանկությունն է հիմնված Արմենտել ՓԲԸ-ի հյուսիսային մասնաճյուղի տնօրեն Հ. Նալբանդյանի տեղեկանքի վրա, ընդ որում այն անձի կողմից տրված տեղեկանքի, որն անձամբ ինքն է ձեռք բերել հեռախոսակալայանի տարածքները և չէր ցանկանա որևէ մեկի ուշադրությունը բևեռել իր կողմից ձեռք բերված տարածքների վրա: Այսինքն, այս պայմաններում բողոք բերողների պնդումը, որ Կառավարության որոշմամբ 350քմ տարածքը թողնվել է իրենց որպես բնակարան բացարձակ անհիմն է, իսկ բողոք բերողները ոչ պատշաճ հայցվորներ:

Փաստորեն, բողոք բերողները պահանջը ներկայացրել են չեղած շենքի չեղած բնակարանների վերաբերյալ: Ավելին, անգամ, եթե համեմատելու լինեն բողոք բերողների օրդերներով նշված տարածքների մակերեսն ու 350 քմ մակերեսը, որոնց համեմատության համար իրենց կողմից ներկայացվել էր ամբողջ շենքի հատակագիծը բողոք բերողների զբաղեցրած տարածքներով, ընդ որում նաև այն տարածքների, որոնք բողոք բերողները զավթել էին ինքնակամ, առանց գոնե հանրակացարանային հատկացման, ապա այս մակերեսները ևս չեն համապատասխանում իրար, ինչը նշանակում է, որ 350քմ մակերես և, ընդհանրապես, որպես բնակմակերես ՀՀ կառավարության կողմից որևէ քառակուսի մետր մակերես չի թողնվել:

4. Ինչ վերաբերվում է բողոք բերողների կողմից ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ 747 և ՍԴՈ 1022 որոշումների վակայակոչումներին, ապա այս դեպքում ևս բողոք բերողները շարժվում են ոչ թե այդ որոշումների տրամաբանությամբ ու դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումներով, այլ միայն իրենց ցանկություններով, քանի որ ՍԴՈ 747 որոշման 7-րդ կետի համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքն վերապահել է շահագրգիռ անձին, այն է անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման եեթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյոք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրական դատարանը «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը պայմանավորում է իրավական շահագրգռվածությամբ, իսկ բողոք բերողների միայն ցանկությունն ուղղված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածի հիման վրա զբաղեցրած տարածքների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուն դեռնա չի նշանակում իրավական շահագրգռվածության առկայություն, այն էլ այն պայմաններում, երբ գույքը, որի նկատմամբ բողոք բերողները ցանկանում են ձեռքբերման վաղեմությամբ սեփականության իրավունք ձեռք բերել որպես սեփականություն արդեն իսկ տնօրինվել է ՀՀ կառավարության կողմից և այս առումով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման համար խոչընդոտն իրոք առկա է:

Եվ վերջապես, ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ 1022 որոշմամբ արտահայտված իավական դիրքորոշումը վերաբերվում է ակնհայտորեն հայցադիմում ներկայացնելու իրավունք չունեցողին և ոչ թե դատաքննության արդյունքով ոչ պատշաճ հայցվոր ճանաչելուն, որն ուղղակիորեն արտահայտված է որոշման 7-րդ կետում, որում նշվում է.

7. Դիտարկելով վերոհիշյալ իրավական կարգավորման կառուցակարգը՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսդիրը վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ընդունելիության հարցի լուծման առնչությամբ սահմանել է դատարանի լիազորությունների սպառնիչ ցանկը, որոնց իրականացմամբ դատարանը վարչական դատավարության հիշյալ փուլում պետք է իրավական գնահատական տա, թե արդյոք հայցվորն իրավասու է դիմել դատարան, արդյոք առկա է նրա մոտ դատարան դիմելու իրավական պահանջ, արդյոք հայցվորը կարող է հանդիսանալ խախտման օբյեկտ հանդիսացող իրավունքի կրող: Սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ

օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջն առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը, այսինքն հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը:

Միանգամայն տեղին է ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ դատական դեպարտամենտի դիրքորոշումներում կատարված այն շեշտադրումը, համաձայն որի՝ «...սույն նորմում տեղ գտած ձևակերպումը կարող է վերաբերել միայն չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չունի, և իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական և մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես, նյութական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում մասնատիպ դիրքորոշման»:

Ինչ վերաբերում է «շահագրգիռ անձ» հասկացությանը, ապա դրա սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտված է սահմանադրական դատարանի 04.04.2008թ. ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում»:

Փաստորեն, Դատարանը ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ 1022 որոշմանը համահունչ գործի քննության արդյունքում գտել է, որ բողոք բերողները պատշաճ հայցվորներ չեն և հայցն իրավացիորեն մերժել է:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, խնդրում է վերաքննիչ բողոքն ամբողջովին մերժել, ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ-5/0546/05/09 վարչական գործով կայացրած վճիռ թողնել անփոփոխ:

3. Գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով բողոքը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման, հետևյալ հիմնավորմամբ:

Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 15.04.2002թ. թիվ 519202 վկայականի համաձայն՝ ՀՀ կառավարության թիվ 15 որոշման հիման վրա Գյումրու Տիգրան Մեծի պողոտայի թիվ 1 հասցեում գտնվող /նախկին փոստատան շենք/ 2012,02քմ. մակերեսով շենքի, 698,98քմ. մակերեսով նկուղի, 420,82քմ. շինության /բնակելի մասնաշենք/ նկատմամբ գրանցվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքը, իսկ 0,185852 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ օգտագործման իրավունքը:

Պետական գրանցման հիմք հանդիսացող՝ ՀՀ կառավարության 10.01.2001թ. թիվ 15 որոշմամբ որոշվել է ՀՀ Շիրակի մարզի օբյեկտների /համաձայն հավելվածի/ վերակառուցման և հետագա տնօրինման իրավունքը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով նախատեսված պայմաններով փոխանցելու նպատակով կազմակերպել համապատասխան անձանց ընտրության, ընտրված սուբյեկտների հետ սահմանված կարգով կնքել համապատասխան պայմանագիր և ապահովել պետական գրանցումը:

Որոշմամբ հաստատված հավելվածի ցանկի 2-րդ կետում, որպես օբյեկտ, նշվել է Տ.Մեծի 1 հասցեի նախկին փոստատան շենքը, որպես տնօրինվող նշվել է Շիրակի մարզպետարան:

Մինչ այդ, ՀՀ կառավարության մեկ այլ՝ 09.02.1998թ. թիվ 81 որոշման 2-րդ կետով որոշվել էր ՀՀ նախարարությունների տնօրինության տակ գտնվող շենքերը և շինությունները հանձնել համապատասխան մարզպետարանների տնօրինությանը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Թիվ 2 հավելված ցանկի 5-րդ կետի համաձայն, ՀՀ կապի նախարարության տնօրինության տակ գտնվող կապի հանգույց շենքի /ծավալը՝ 2400քմ./ Շիրակի մարզպետարանի տնօրինությանն է հանձնվել 2050քմ. տարածք /նախատեսվող բնույթը՝ դպրոց/, իսկ 350քմ. տարածք հանձնվել է ՀՀ կապի նախարարությանը /նախատեսվող բնույթը՝ հեռախոսակայան/:

Նշված է 2050քմ. մակերեսով տարածքը՝ ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատված 18.01.1999թ. ակտի համաձայն ընդունվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի հաշվեկշիռ:

Այսինքն, ՀՀ Շիրակի մարզպետարանին, որպես անշարժ գույք, տրվել է 2400քմ. մակերեսով կապի հանգույցի շենքի միայն 2050քմ. տարածքը, սակայն հետագայում՝ 2002թ., որպես մարզպետարանի սեփականություն, պետական գրանցում է ստացել Գյումրու Տ.Մեծի պողոտայի թիվ 1 հասցեում գտնվող՝ ընդամենը 2432,84քմ. մակերեսով շինությունը և 698,98քմ. մակերեսով նկուղը:

Ընդ որում, որպես պետական գրանցման հիմք է նշվել ՀՀ կառավարության 10.01.2001թ. թիվ 15 որոշումը, որում խոսվում է միայն Շիրակի մարզպետարանի տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի մասին, որը, ինչպես վերը նշվեց, կազմել է ընդամենը 2050քմ. մակերեսով տարածք:

Մնացած տարածքի պետական գրանցման համար հիմք հանդիսացող որևէ իրավական հիմք դատարանին չի ներկայացվել:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մնացած, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 09.08.1998թ. թիվ 81 որոշմամբ ՀՀ կապի նախարարության տնօրինությանը հանձնված /թողնված/ 350քմ. մակերեսով տարածքի պետական գրանցման իրավական հիմքեր առկա չեն:

Վերաքննիչ դատարանը նշված եզրահանգումը համահունչ է համարում սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2010թ. որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմանը, ըստ որի՝ ՀՀ կառավարության 10.01.2001թ. թիվ 15 որոշմամբ մարզպետարանին է անցել «նրա տնօրինության տակ գտնվող անշարժ գույքը, այն է՝ ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 81 որոշմամբ ՀՀ կապի նախարարության տնօրինությանը Գյումրի քաղաքում 2400քմ. մակերեսով կապի հանգույցի շենքի միայն 2050քմ. տարածքը, որն էլ ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 22.01.1999թ. հաստատված ակտով ընդունվել է Մարզպետարանի հաշվեկշիռ»:

Այսինքն, ՀՀ կապի նախարարությանը թղնված 350քմ. մակերեսով բնակելի շենքի նկատմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքի գրանցումը կատարվել է առանց իրավական հիմքի, ինչպես նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավահաստատող փաստաթղթերի բացակայությամբ, հետևաբար այդ մասով պետական գրանցումը ենթակա է անվավեր ճանաչման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով որպես օրենքի խախտմամբ կայացված վարչական ակտ:

Ընդ որում, Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում մատնանշել, որ ՀՀ վարչական դատարանի 27.03.2013թ. վճռով նշված հանգամանքը չի էլ հերքվել: Վարչական դատարանը հայցվոր կողմի պահանջը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ վերը նշված 350քմ. մակերեսով տարածքը չի հանդիսանում այն տարածքը, որ հայցվորներին տրամադրվել է որպես հանրակացարան, հետևաբար վիճարկվող ակտերով նրանց որևէ իրավունք չի խախտվել:

Իր այս եզրահանգման հիմքում Վարչական դատարանը դրել է մի շարք հանգամանքներ՝

- Որպես հանրակացարան օգտագործելու համար հատկացված տարածքները կապի հանգույցից եղել են մեկուսացված:

- Բաղաբացիներով զբաղեցրած տարածքը չէր կարող հանձնվել ՀՀ կապի նախարարությանը՝ որպես հեռախոսակայան օգտագործելու նպատակով:

- Բացի այդ, հանրակացարանները հատկացվել են միայն օգտագործման իրավունքով, որպիսի իրավունքն իր իրավաբանական ուժը պահպանած է եղել վերջիններիս կողմից կապի հանգույցում իրականացրած աշխատանքի ժամանակամիջոցի ընթացքում:



Վերաքննիչ դատարանը Վարչական դատարանի նշված եզրահանգումները համարում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ, վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ օրդերներում նշված «մեկուսացված» բառը վերաբերում է կոմունալ հարմարություններին: Միասնական օրդերների տեքստում այդպես էլ նշված է. «Մեկուսացված կոմունալ հարմարություններով»: Եվ, բացի այդ, նշված հանգամանքը որևէ կերպ չի բացառում այն հնարավորությունը, որ կապի հանգույցի շենքի մի մասը կարող էր օգտագործվել որպես հանրակացարան՝ անկախ դրա տարածքների մեկուսացված կոմունալ հարմարություններ ունենալ կամ չունենալու խնդրից: Ընդհակառակը, Գյումրու քաղաքապետի տեղակալի 26.09.2003թ. գրությամբ /ուղղված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարին/ հայտնվել է հետևյալը /հտ.1, գ.թ. 19/. «1958թ. Լենինի հրապարակի վրա շահագործման է հանձնվել կապի հանգույցի շենքը, դրա հետ միասին Թբիլիսյան խճուղի /այժմ Խրիմյան Հայրիկ փողոց/ թիվ 59 հասցեով բնակելի մասնաշենքը, 1971թ. բնակիչներին բնակարանով ապահովելուց հետո վերջինից նշված բնակելի մասնաշենքը դարձվում է աղմինիստրատիվ մասնաշենք»:

1978թ. կապի հանգույցի նոր շենք տեղափոխվելու պատճառով նշված աղմինիստրատիվ մասնաշենքը կապի հանգույցի աշխատողների համար դարձվում է ընտանեկան հանրակացարան, որտեղ մինչև այսօր բնակվում են դիմող ընտանիքները ...»:

Վերը նշվածի հիմքով, Վերաքննիչ դատարանը կրկին մատնանշում է, որ հանրակացարանի սենյակների մեկուսացված լինելու կամ չլինելու խնդիրը վեճի լուծման համար որևէ նշանակություն չունի:

Բացի այդ, համաձայն «ԱրմենՏել» ՀՀ ՓԲ ընկերության հեռահաղորդակցության Հյուսիս-Արևմտյան տարածքի տնօրենի 21.11.2003թ. տեղեկանքի՝ «ՀՀ կապի նախարարության տնօրինության տակ գտնվող Գյումրու կապի հանգույցի նախկին շենքի 2400 քառ.մետր ընդհանուր տարածքից ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 9-ի թիվ 81 որոշմամբ 2050 քառ.մետր հատկացվել է Շիրակի մարզպետարանին, նույն շենքի մնացած 350 քառ.մետր բնակելի տարածքը Թբիլիսյան խճուղի 59 հասցեով չի հանձնվել մարզպետարանին և թողնվել է ՀՀ կապի նախարարությանը, հաշվի առնելով այն, որ 1978թ-ից, նշված տարածքում բնակվում են կապի հանգույցի աշխատակիցները մինչև օրս միասնական օրդերով և գրանցումով»: Նշված տեղեկանքը որպես վեճի լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող փաստաթուղթ, իրենից ներկայացնում է վերաբերելի գրավոր ապացույց, որում պարունակվող տեղեկությունը որևէ այլ ապացույցով չի հերքվում, այլ ընդհակառակը, հավաստվում է նաև նույն մարմնի մեկ այլ՝ 10.09.2002թ. տեղեկանքով /հտ.7, գ.թ. 70/:

Բացի նշվածը, Վերաքննիչ դատարանի կողմից կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ այն մասնաշենքը, որն առկա է եղել ՀՀ Շիրակի մարզպետարանի 15.04.2002թ. սեփականության վկայականում՝ որպես թիվ 2 բնակելի շենք, և այժմ էլ առկա է նույն նշմամբ «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբերատիվի 02.05.2002թ. սեփականության վկայականում, նույն այն տարածքն է, որտեղ ներկայումս փաստացի բնակվում են հայցվորներն իրենց ընտանիքով: Այդ մասին առկա է նաև կադաստրի բաժնի պետի ստորագրությամբ և կադաստրի կնիքով հաստատված համապատասխան հատակագիծը /հտ.1, գ.թ. 38/:

Տեղատեսությամբ արձանագրվել է նաև, որ այդ մասնաշենքի պատին ամրացված է շենքերի համարակալման ցուցանակ՝ «Խրիմյան Հայրիկ փողոց, 59» նշումով, իսկ, ինչպես վերը նշվեց, Խրիմյան Հայրիկ փողոցը նախկին Թբիլիսյան խճուղին է, ինչի մասին գործում առկա է համապատասխան տեղեկանք /հտ.7, գ.թ. 55/:

Նշված փաստերն իրենց համակցության մեջ ակնհայտորեն վկայում են, որ ներկայումս «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբերատիվի 02.05.2002թ. սեփականության վկայականում՝ որպես թիվ 2 բնակելի շենք նշմամբ տարածքը այն նույն տարածքն է, որ զբաղեցնում են հայցվորները և որը նրանց տրամադրվել է որպես հանրակացարանային տարածք:

Վարչական դատարանը նշել է նաև, որ Տ.Մեծի 1/3 հասցեում գտնվող տարածքը /հեռախոսակայան/ տրվել է վարձակալության և որ Տ.Մեծի 1/4 հասցեում գտնվող տարածքը /հեռախոսակայան/ կից է «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբերատիվին, ինչի հիմքով եզրակացրել է, որ հենց դա է այն հեռախոսակայանը, որ 350քմ. մակերեսով թողնվել է ՀՀ կապի նախարարությանը:

Նախ, Վերաքննիչ դատարանը մատնանշում է, որ այդ փաստը հավաստող որևէ ապացույց գործում առկա չէ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից կատարված տեղատեսությամբ

պարզվել է, որ այդ տարածքները «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբրատիվի շենքից ակնհայտորեն առանձնացված այլ շենքի տարածքներ են, իսկ ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 81 որոշման հավելվածում հստակորեն նշված է «կապի հանգույցի շենքից» 2050քմ. տարածք և 350քմ. տարածք, ինչը վկայում է, որ խոսքը գնում է միասնական կառույց հանդիսացող շենքի մասին, որպիսինը ներկայումս հանդիսանում է «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբրատիվի շենքը՝ թիվ 2 բնակելի մասնաշենքով հանդերձ:

Ինչ վերաբերում է այն խնդրին, որ չէր կարող բնակիչներով զբաղեցված տարածքը հանձնվել և օգտագործվել որպես հեռախոսակայան, ապա Վերաքննիչ դատարանի կարծիքով նշվածը որևէ կերպ չի բացառում այն փաստը, որ ՀՀ կառավարության թիվ 81 որոշման մեջ նշված 350քմ. տարածքը կարող էր տրամադրվել՝ հետագայում այնտեղ բնակվող անձանց տեղափոխման հարցը լուծելու և դրանից հետո միայն այն նախատեսվող նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Ամբողջ վերը նշված վերլուծությունների և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Վերաքննիչ դատարանը հանգում է ներքին համոզմունքի վրա հիմնված այն եզրահանգման, որ հայցվորների կողմից ներկա պահին զբաղեցված տարածքը այն նույն տարածքն է, որը նշված է ՀՀ կառավարության թիվ 81 որոշման թիվ 2 հավելվածի ցանկում և որոնց նկատմամբ տրամադրվել են հանրակացարանային օրդերները:

Հայցվորների օգտագործման իրավունքը դադարած լինելու՝ Վարչական դատարանի եզրահանգման կապակցությամբ, Վերաքննիչ դատարանը փաստում է հետևյալը:

Նախ, համաձայն ներկայացված փաստաթղթերի /հտ.7, գ.թ.41-42/, հայց ներկայացրած անձանցից Ֆելիքս Սարգսյանը աշխատել է «ԱրմենՏել» ընկերության համակարգում մինչև 2005թ. օգոստոսը, Հովսեփ Գալոյանը՝ մինչև 2006թ. մայիսը, Արևհատ Պողոսյանը՝ «Հայփոստ» ընկերության համակարգում՝ մինչ օրս, իսկ Վաղինակ Պողոսյանը աշխատել է կապի համակարգում, սակայն աշխատանքի ժամանակահատվածը հնարավոր չի եղել ճշտել: Այսինքն, հայցվորներից /իրավահաջորդներից/ առնվազն երեքը աշխատանքից ազատված չեն եղել այն ժամանակ, երբ կատարվել է վիճելի պետական գրանցումը:

Բացի այդ, գործատուն որևէ կերպ չի դրսևորել իր կամքը հայցվորներին և նրանց ընտանիքի անդամներին բնակելի տարածության օգտագործումից զրկելու ուղղությամբ, մասնավորապես, առկա չէ նրանց վտարելու վերաբերյալ պատկան մարմնին ներկայացված պահանջ:

Բացի նշվածը, համաձայն «ԱրմենՏել» ընկերության Գյումրու հեռախոսային հանգույցի 15.09.2002թ. տեղեկանքի /հտ.7, գ.թ. 70/, նշված բնակելի տարածքը հատկացվել է որպես ընտանեկան հանրակացարան, որի պարագայում խոսք չի կարող գնալ աշխատանքից ազատվելու դեպքում այդ տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը կորցրած ճանաչվելու մասին, առավել ևս, որ հայցվորները շարունակել են հաշվառված մնալ /որով մինչև 26.11.2005թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածում կատարված փոփոխությունը հավաստվում էր բնակելի տարածության օգտագործման իրավունքի առկայության փաստը/ և փաստացի բնակվել նշված տարածքներում:

Եվ վերջապես, 26.11.2005թ. ուժը կորցրած ՀՀ բնակարանային օրենսգրքի 105 և 102-րդ հոդվածների հիմքով հայց ներկայացրած անձանցից և իրավահաջորդներից Ֆ.Սարգսյանը, Վ.Պողոսյանը, Հ.Գալոյանը, Ա.Պողոսյանը այն կատեգորիայի անձինք են, որոնց ընտանիքներին կարելի է վտարել նշված տարածքներից միայն այլ բնակելի տարածք հատկացնելու պայմանով, որպիսի պահանջ և համապատասխան պայման ևս առկա չէ:

Վերը նշվածի հիմքով, Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում Վարչական դատարանի եզրահանգումը հայցվորների՝ սույն գործով ոչ շահագրգիռ անձ դիտարկելու վերաբերյալ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման, ուստի բավարարման են ենթակա մաս հայցվորների ինչպես հիմնական, այնպես էլ հետևանքների վերացման ամսացյալ պահանջները:

Դատական ծախսերի բաշխման կարգով ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային ստորաբաժանումից, հօգուտ հայցվորների, դատական ծախսերի փոխհատուցման կարգով ենթակա է բավարարման 24.000 դրամ, այդ թվում՝ հայց ներկայացնելու համար վճարված 4.000 դրամը և վճարված բողոք ներկայացնելու համար վճարված 20.000 դրամը:

ՆԱԽԱԳԻՏՈՒՄ Գյումրու տարածքային ստորաբաժանումից հօգուտ պետական բյուջեի ենթակա է բավարարման 10.000 դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի բավարարման պարագայում



գանձվող պետական տուրքի գումար, քանի որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ հայցվոր կողմն ազատվել է վերաքննիչ բողոք բերելու համար պետական տուրքի վճարումից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 141-րդ, 144-152-րդ և 156-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը,

Ո Ր Ո Շ Ե Ց

Վերաքննիչ բողոքը բավարարել:

Բեկանել ՀՀ վարչական դատարանի 27.03.2013 թվականի վճիռը և այն փոփոխել:

Ֆելիքս Սարգսյանի իրավահաջորդ Լուսիա Սարգսյանի, Գոռ Պողոսյանի, Վաղինակ Պողոսյանի իրավահաջորդ Արևհատ Պողոսյանի, Հովսեփի և Անդրանիկ Գալոյանների հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու տարածքային ստորաբաժանման /երրորդ անձինք՝ ՀՀ Շիրակի մարզպետարան, «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվ/՝ բավարարել:

Մասնակի՝ ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 81 որոշմամբ ՀՀ կապի նախարարությանը թողնված 350քմ. մակերեսով բնակելի շինության մասով անվավեր ճանաչել պետական գրանցման միասնական 1-2 մատյանի թիվ 000002 համարի տակ 15.04.2002 թվականին ՀՀ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքի գրանցումը:

Որպես անվավերության հետևանք, մասնակի՝ նույն 350քմ. մակերեսով բնակելի շենքի մասով, անվավեր ճանաչել ՀՀ Շիրակի մարզպետարանի և «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի միջև 23.04.2002 թվականին կնքված անշարժ գույքի նվիրաբերության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 1 հասցեով «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվի՝ 02.05.2002 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատական ծախսերի բաշխման կարգով ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային ստորաբաժանումից, հոգուտ հայցվորների, բռնագանձել 24.000 դրամ, այդ թվում՝ հայց ներկայացնելու համար վճարված 4.000 դրամը և վճարել բողոք ներկայացնելու համար վճարված 20.000 դրամը:

ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու տարածքային ստորաբաժանումից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 10.000 դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի բավարարման կապակցությամբ գանձվող պետական տուրքի գումար:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝
Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ՝
Ա.ԱՔԵԼՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ՝
Գ.ՂԱՐԻՔՅԱՆ

